# ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

41ՐԴ. ՏԱՐԻ ԹԻՒ 29 (2029) ՇԱԲԱԹ, ՅՈՒԼԻՍ 31, 2021
VOLUME 41, NO. 29 (2029) SATURDAY JULY 31, 2021

Պաշտօնաթերթ՝
Ս. Դ. Հնչակեան Կուսակցութեան
Արեւմտեան Ամերիկայի

MASSIS Weekly
1060 N. Allen Ave. Suite 101
Pasadena, California 91104


## ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

## Նախագահ Պայտընի Առաջին Վեց Ամիսները

Այս շաբաթ Միացեալ Նահանգներու նախագահ Ճօ Պայտըն բոլորեց իր պաշտօնավարման առաջին վեց ամիսները, որոնք յատկանշուեցան բազմաթիւ յաջողութիւններով, սակայն օրէնսդրական կարեւոր ծրագիրներ կը մնան Գոնկրէսէն ներս սակարկութիւններու առարկայ:

Պայտընի վարչակազմի առաջնահերթութիւնը եղաւ համավարակի առողջապահական, ընկերային ու տնտեսական հետեւանքներու մեղմացումը ու յաղթահարումը: Այս ուղղութեամբ կարելի եղաւ հասնիլ բաւական մեծ յաջողութիւններու: Քորոնա ժահրի դէմ պատուաստումի արշաւը ընթացաւ բաւական սահուն ու ժողովուրդի մօտ 50 տոկոսը՝ աւելի քան 150 միլիոն ամերիկացիներ պաշտպանուեցան փոխանցիկ հիւանդութեան դէմ:

Դեմոկրատ օրէնսդիրները, առանց Հանրապետականներու մասնակցութեան, կարողացան վաւերացնել 1,9 թրիլիոն տոլարի »Ամերիկայի փրկութեան նախագիծը«, որուն շնորհիւ միլիոնաւոր քաղաքացիներ ստացան 1400 տոլար գումար, անգործութեան սովորական նպաստներուն վրայ տրամադրուեցան 300 տոլար շաբաթական յաւելեալ գումար, իսկ վերջերս ի զօրու դարձաւ իւրաքանչիւր երեխայի համար ամսական 300 տոլարի նպաստը, որ պիտի շարունակուի մինչեւ տարեվերջ: Տնտեսութեան խթանման բազմաթիւ այլ ծրագիրներու շնորհիւ երկիրը կարողացաւ արագօրէն դուրս գալ 2020-ի տագնապներէն:

Ներկայիս նախագահ Պայտընի օրակարգին վրայ գլխաւոր հարցը ենթակառոյցներու օրինագիծն է, որուն ընդունումը առիթ պիտի տայ ճանապարհներու, մայրուղիներու, կամուրջներու եւ կապի այլ միջոցներու վերանորոգումը, որոնք տասնամեակներէ ի վեր կը ծգծգուին Հանրապետականներու եւ Դեմոկրատներու միջեւ ֆինանսաւորման շուրջ տարակարծութիւններուն պատճառաւ:

Պայտըն կը շարունակէ դիմագրաւել ներքին բազմաթիւ այլ մարտահրաւէրներ, որոնք եւս կը սպասեն լուծումներու: Անոնց շարքին են Մեքսիքայի հետ սահմանի վրայով հարիւր հազարաւոր գաղթականներու ապօրէն մուտքը Միացեալ Նահանգներ, անհատական զէնքերու տարածումը կանխող օրէնքներու բացակայութիւնը, ցեղային խտրականութեան յառաջա-

Շար.ը էջ 6

## Երեւան Կը Հակադարձէ Պաքուին Ատրպէյճան Կը Խոչընդոտէ Եռակողմ Յայտարարութիւններու Իրագործումը

*«2020-ի Նոյեմբեր 9-ի եւ 2021-ի Յունուար 11-ի՝ Հայաստան-Ռուսաստան-Ատրպէյճան ձեւաչափով ընդունուած յայտարարութիւնների ամբողջական կատարմանը խոչընդոտում է ոչ թէ Հայաստանը, այլ՝ Ատրպէյճանը», «Արմէնփրէս»-ի հարցման ի պատասխան, յայտնած են Հայաստանի արտաքին գործոց նախարարութեան լրատուութեան եւ հանրային դիւանագիտութեան վարչութենէն՝ հակադարձելով Ատրպէյճանի արտաքին գործոց նախարար՝ Ճէյհուն Պայրամովի յայտարարութեան:*

*Սերպիոյ արտաքին գործոց նախարարի հետ համատեղ ասուլիսի ընթացքին, Պայրամով Հայաստանը մեղադրած է Նոյեմբեր 9-ի եռակողմ յայտարարութեան իրագործումը խոչընդոտելու մէջ:*

*«Եռակողմ յայտարարութիւնների իրականացումը դիտարկելիս պէտք է առաջնորդուել յստակ փաստերով եւ ոչ թէ այդ յայտարարութիւնների իւրովի մեկնաբանմամբ: Իսկ փաստերը հետեւեալն են. յայտարարութեան ստորագրումից մէկ ամիս յետոյ ատրպէյճանական զօրամիաւորումները խախտել են յայտարարութեան Ա. կէտը, որի համաձայն կողմերը պէտք է մնային իրենց դիրքերում, եւ յարձակում են սկսել Արցախի Հադրութի շրջանի Հին Թաղեր եւ Խծաբերդ գիւղերի ուղղութեամբ, ինչի արդիւնքում գաւթել են այդ բնակավայրերը, սպանել եւ գերեվարել հայ զինծառայողներին», - յայտնած են ՀՀ ԱԳՆ լրատուութեան եւ հանրային դիւանագիտութեան վարչութենէն:*

*Պաշտօնական Երեւանը ընդգծած է, որ ի տարբերութիւն Հայաստանին՝ Ատրպէյճանը չէ կատարած Նոյեմբեր 9-ի յայտարարութեան 8-րդ կէտը, որու համաձայն տեղի պէտք է ունենար ռազմագերիներու, պատանդներու եւ այլ պահուող անձերու փոխանակումը: Աւելին, հայ ռազմագերիները կ'ենթարկուին քրէական հետապնդման, որ նաեւ միջազգային մարդասիրական իրաւունքի կոպիտ խախտում է, ըսուած է յայտարարութեամբ:*

*«Ատրպէյճանի զինուած ուժերը Մայիսի 12-ից սկսած ներթափանցել են եւ շարունակում են գտնուել Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխան տարածքում: Հարկ է նշել, որ ատրպէյճանական*

Շար.ը էջ 4

## ԱՄՆ կը Մերժէ Ուժի Կիրառումը Սահմանազատում Իրագործելու Պարագային



ԱՄՆ դեսպան Լին Թրեյսի սահմանագիծ այցելութեան ընթացքին

*Հայաստանի մօտ ԱՄՆ-ի դեսպան Լին Թրեյսին այսօր՝ ՊՆ ներկայացուցիչներու ուղեկցութեամբ այցելած է Գեղարքունիքի մարզ, կազմակերպուած է այց Վերին Շորժայի հատուածի սահմանագիծ:*

*ՊՆ-ի հաղորդմամբ՝ դեսպան Թրեյսին վերահաստատած է ԱՄՆ-ի մտահոգութիւնը հայ-ատրպէյճանական սահմանի երկայնքով միջադէպերու վերաբերեալ եւ ընդգծած, որ ԱՄՆ-ը կը մերժէ ուժի կիրառումը սահմանազատում իրագործելու պարագային:*

*Դեսպանը նաեւ ընդգծած է, որ ԱՄՆ-ը՝ որպէս ԵԱՀԿ Մինսքի խումբի համանախագահ երկիր, խորապէս հաւատարիմ է Ղարաբաղեան հակամարտութեան երկարաժամկէտ քաղաքական լուծման հասնելու նպատակով բոլոր կողմերու հետ աշխատելու գործընթացին:*

*Միեւնոյն ժամանակ, ըստ Լին Թրեյսիի՝ ԱՄՆ-ը կողմերէն կը պահանջէ հնարաւորինս արագ վերադառնալ Մինսքի խումբի համանախագահներու մակարդակով ընթացող բանակցութիւններուն:*

## Արցախի Մէջ Այժմ Կ՛ապրի Աւելի Քան 120 Հազար Հայ. Թանդիլեան Կը Պատասխանէ Ալիեւին



Արցախի աշխատանքի, ընկերային եւ գաղթականներու հարցերու նախարար՝ Մանէ Թանդիլեան

*«Արցախում այժմ ապրում է աւելի քան 120 հազար հայ», յայտարարած է Լեռնային Ղարաբաղի աշխատանքի, ընկերային եւ գաղթականներու հարցերու նախարար՝ Մանէ Թանդիլեանը՝ արձագանգելով Ատրպէյճանի նախագահ՝ Իլհամ Ալիեւի պնդման, թէ այնտեղ ապրողներու թիւը 25 հազար է:*

*Թանդիլեան «Ազատութիւն»-ի հետ զրոյցի ընթացքին մանրամասնեց, որ իր պնդման հիմքը ընկերային եւ կրթական ծրագիրներու շահառուներու թիւն է,- «Մենք այդ ծրագրերի միջոցով փաստացի տեղեկատուութիւն ենք ստանում, թէ քանի մարդ է բնակւում Արցախում, շատ պարզ է հաշուարկը»:*

*Ատրպէյճանի նախագահ՝ Իլհամ Ալիեւը օրերս յայտարարած էր, թէ Ղարաբաղ 25 հազար մարդ կը բնակի: Անդրադառնալով ռուս խաղաղապահներու հրապարակած թիւերուն ան ըսած է, որ վերադառնալը չի նշանակեր մնալ այնտեղ: Ալիեւի խօսքով՝ իրենք տարատեսակ միջոցներ եւ արբանեակ ունին ու գիտեն, թէ այնտեղ քանի ինքնաշարժ կայ եւ կը տեսնեն մարդոց տեղաշարժը: Ատրպէյճանի նախագահը անտրամաբանական կը համարէ 25 հազար բնակիչներու համար կարգավիճակի հարցի քննարկումը: Պատերազմի աւարտէն ի վեր Ալիեւը քանի մը անգամ յայտարարած է, որ ինքը ղարաբաղեան խնդիրը փակուած կը համարէ, մինչդեռ հայկական կողմը պարբերաբար կը բարձրացնէ Մինսքի խումբի ձեւաչափով բանակցութիւններու վերսկսման եւ Ղարաբաղի կարգավիճակը ճշգրտե-*

Շար.ը էջ 5

## ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ՄԱՄՈՒԼ

# Երասխի Դէպքերի Յստակ Ուղերձները

*ՀՀ-ի եւ Նախիջեւանի սահմանին սադրելով հերթական միջադէպը՝ Ատրպէյճանը փորձում էր ուժի դիրքերից ցուցադրել իր առաւելութիւնը յետպատերազմեան շրջանում, սակայն հայկական զինուժի համարժէք պատասխանը սառը ցնցուղ էր Պաքուի համար: Հայկական կողմն իր գործողութիւններով ցոյց տուեց, որ երկրի զինուած ուժերը կարճ ժամանակահատուածում վերականգնել է իր մարտունակութիւնը եւ պատրաստ է անգամ անհամարժէք պատասխան տալու նմանատիպ ցանկացած սադրանքի: Պաքուն, իր գործելաոճին հաւատարիմ, հայ-ատրպէյճանական սահմանի հանդէպ հերթական ոտնձգութիւնն ուղեկցեց ապատեղեկատուութեամբ: Ատրպէյճանի պաշտպանութեան նախարարութիւնը կեղծ լուրեր էր հրապարակում, թէ հայկական զինուած ուժերը կրակ են բացել Նախիջեւանի Սադարակ բնակավայրի ուղղութեամբ: Իսկ իրականութիւնն այն էր, որ հայկական կողմը հուժկու պատասխան էր տալիս սահմանին դիրքերն առաջ բերելու ատրպէյճանցիների փորձին եւ այդտեղ հայ զինծառայողի զոհուելու դէպքին:*

*ՀՀ ՊՆ-ն միջադէպի ընթացքում յայտնեց ատրպէյճանական կողմի կորուստների մասին: Պաշտօնական Պաքուն, ինչպէս միշտ, այս անգամ եւս թաքցրեց իր զոհերի փաստը՝ հաղորդելով միայն վիրաւորի մասին: Այստեղ Պաքուի գործողութիւնները լիովին բացատրելի են: Վերջինս չէր կարող ընդունել սեփական կորուստները, քանի որ այն յօդս կը ցնդեցնէր իր կողմից ձեւաւորուած յետպատերազմեան միֆը, թէ ատրպէյճանական բանակն աւելի մարտունակ է, քան հայկականը: Սեփական կորուստները հրապարակելով՝ Ալիեւը ստիպուած էր լինելու ընդունել, որ չի կարողանում զէնքի ուժով յետպատերազմեան կարգաւորման գործընթացում թելադրող լինել: Հայկական զինուժի կամային յատկութիւնները եւ բարձր մարտունակութիւնը փաստեր են, որոնց լաւ են ծանօթ Ատրպէյճանում՝ դա իրենց մաշկի վրայ պարբերաբար զգալով: Այսօր սահմանին պայրաքթարների գործօնը չէ որոշիչը, այլ՝ սահմանապահ զօրքերի կամային յատկութիւններն ու ռազմական գործին տիրապետելու հմտութիւնները, ինչի առկայութիւնը հայ զինծառայողների մօտ երբեւէ հարցականի տակ չի դրուել: Միանշանակ է, որ հայ-ատրպէյճանական սահմանի յստակ ամրագրուած հատուածներում ցանկացած սադրանք ստանալու է համարժէք եւ աւելին՝ անհամարժէք պատասխան: Երասխի միջադէպը փաստեց, որ հայկական կողմը վճռական է տրամադրուած իր ինքնիշխան տարածքների հանդէպ ցանկացած ոտնձգութեան կանխման հարցում: Միւս կողմից էլ այդ վճռականութիւնն աւելի իրատեսական է դարձնում զարգացումների այնպիսի սցենարները, որոնց դէպքում լուրջ սահմանային բախումները կարող են անխուսափելի լինել:*

*Երասխում Հայաստանը յստակ ուղերձ յղեց, որ չի հանդուրժելու սահմանային սադրանքները եւ պատրաստ է մինչեւ վերջ կանգնելու իր իրաւունքների պաշտպանութեան հարցում, ինչը նշանակում է, որ ատրպէյճանական սադրանքների կրկնութեան դէպքում լայնածաւալ բախումներն անխուսափելի են լինելու արդէն ՀՀ սահմաններին՝ իրենց բոլոր հետեւանքներով: Թերեւս, նման զարգացումների հեռանկար էր տեսնում նաեւ տարածաշրջանում խաղաղութեան պահպանման առաքելութիւն ստանձնած ՌԴ-ն, երբ իր ԱԳՆ խոսնակի՝ Մարիա Զախարովայի շուրթերով յայտնում էր սահմանային խախտումների դէպքերով մտահոգուած լինելու մասին:*

*Երասխի միջադէպի միւս ուղերձն այն էր, որ ուժի դիրքերից երկու երկրների միջեւ առկայ խնդիրների լուծման ատրպէյճանական մարտավարութիւնը հեռանկար չունի եւ չի կարող նպաստել տարածաշրջանում կայունութեան հաստատմանն ու համագործակցութեան համար նախադրյալների ստեղծմանը: Եթէ Ատրպէյճանն իրօք ցանկանում է խաղաղութիւն, ապա պէտք է առանց նախապայմանների վերադարձնի բոլոր ռազմագերիներին եւ Սիւնիքի ու Գեղարքունիքի սահմանային տարածքներից դուրս բերի իր զինուած ուժերի խմբաւորումները:*

*«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ»*

# Փարիզի Թափանցիկ Յորդորը Հայաստանի Հասարակական-Քաղաքական Միջավայրին

ՅԱԿՈԲ ԲԱԴԱԼԵԱՆ

*Հայաստանում Ֆրանսայի դեսպան Ջոնաթան Լաքոթի հարցազրոյցը շարունակում է լինել հայաստանեան համացանցի, հասարակական-քաղաքական շրջանակների ուշադրութեան կեդրոնում, թէեւ, դատելով արձագանքների զգալի մեծամասնութիւնից, այդ ուշադրութիւնը շարունակում է լինել գերազանցապէս իռացիոնալ, չափազանցուած սպասումների եւ դիտարկումների տիրոյթում, այդպիսով իսկ լինելով առաջին հերթին հենց հայ-ֆրանսական յարաբերութեան հեռանկարի համար: Մի բան, ինչը կանդնեցնելու նպատակն էլ թերեւս Ֆրանսայի դեսպանի հարցազրոյցի առանցքային շարժառիթներից մէկն էր, առայժմ կարծես թէ ոչ այնքան ստացուած:*

*Ցամենայնդէպս, դատելով դեսպանի շեշտադրումներից, որ տարբեր հարցերի առնչութեամբ արել է հարցազրոյցի ընթացքում, նա նպատակ ունէր Հայաստանի հանրութեանը հասցնել կարեւոր ազդակներ առայն, որ պէտք չէ Ֆրանսայի վրայ դնել այնպիսի սպասումներ, որոնք համարժէք չեն ռեգիոնալ քաղաքականութեան իրական տրամաբանութեանն ու ռեգիոնում, նաեւ աշխարհաքաղաքական համատեքստում ուժերի յարաբերակցութեանը, քանի որ դրա հետեւանքը կարող է լինել ոչ թէ Ֆրանսայի դերի եւ էֆեկտիւութեան աճը, այլ հակառակը՝ Ֆրանսայի ռեգիոնալ դերակատարման աճի խոչընդոտների գեներացիան: Առաւել եւս, որ այդ խնդիրը՝ Ֆրանսայի դերակատարութեան համար առաւելագոյն խոչընդոտների ձեւաւորումը, որպէս նպատակ ակնյայտօրէն հետապնդում են Թուրքիան, Ատրպէյճանը, նրանց ծիրում գտնուող այլ պետութիւններ, նաեւ Ռուսաստանը, յամենայնդէպս այն քաղաքականութեան համատեքստում, որը մշակուել եւ վարուել է մինչ այժմ, եւ որի առանցքում եղել է Կովկասը Եւրաատլանտեան խաղից զերծ պահելու նպատակով Թուրքական խաղընկերոջ ռազմավարական ընտրութիւնը: Ահա այդ իմաստով, խաղը շարունակելու համար այդ շրջանակների ու նրանց խաղընկերների համար շատ կարեւոր է, որպէսզի Ֆրանսայի ռեգիոնալ դերակատարումը առաւելագոյնս ուղիղ ու բաց տեքստով հակադրուի Ռուսաստանին, Հայաստանում Ռուսաստանի հետաքրքրութիւններին ու նպատակներին: Ցատկապէս, որ այդ շրջանակների համար բաւականին նկատելի է, որ ԱՄՆ-ը եւ Ֆրանսան սկսել են Մոսկուայի հետ քննարկումների որոշակի գործընթաց, որի միջոցով թերեւս փորձում են տարբեր գործիքակազմի կիրառմամբ հասնել Ռուսաստանը Մինսկի խմբի համանախագահութեան ձեւաչափ դէ ֆակտօ վերադարձնելու որոշման, որովհետեւ դէ իւրէ Ռուսաստանն այդ ձեւաչափում է, եւ դէ ֆակտօ՝ ռուս-թուրքականում: Ֆրանսայի դեսպանի հարցազրոյցը խոշոր հաշուով հենց այդ մասին է, որ Ֆրանսայի ռեգիոնալ դերակատարման աճը կարող է էֆեկտիւ հունի մէջ լինել այն դէպքում, երբ այդ դերակատարումը չի դիտւում Ռուսաստանի, եւ դրա մասնակցութեամբ ռեգիոնալ նոր իրավիճակի հակադրութեան ռեժիմում, որովհետեւ դա նշանակելու է ուժգին հակազդեցութիւն Ֆրանսային, այդ թւում հենց հայաստանեան տիրոյթում, որը պաշտօնական Փարիզը փորձում է դիտարկել որպէս ռեգիոնալ դերի առանցքային հենման կէտ:*

*«ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»*

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
Արեւմտեան Ամերիկայի Շրջանի

ԽՄԲԱԳԻՐ
ԳՐԻԳՈՐ ԽՈՏԱՆԵԱՆ

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԷՆ
ՎԱՀԷ ԱՋԱՊԱՀԵԱՆ

MASSIS Weekly
Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA
1060 N. Allen Ave.
Pasadena, CA 91104
Phone: (626) 797-7680
Fax: (626) 797-6863
E:Mail: massis2@earthlink.net
*http://www.massisweekly.com*

(USPS 667-310) (ISSN 0744-334X)
Published Weekly
Except Two Weeks in August

ANNUAL SUBSCRIPTION RATES:
USA $50.00, $100.00 (First Class)
Canada $125.00 (Air Mail)
Overseas $250.00 (Air Mail).
All payments must be made in US funds & Drawn on US banks.

Periodicals Postage Paid at Pasadena CA.
Please Send Address Change To MASSIS WEEKLY

# Արցախ է Վերադարձել Աւելի Քան 100 Հազար Մարդ. Իլհամ Ալիեւը Սխալ է

ԼՈՒՍԻՆԷ ՈՍԿԱՆԵԱՆ

*Ատրպէյճանանի նախագահ Իլհամ Ալիեւը Յուլիսի 22-ին Azerbaijan TV հեռուստաընկերութեանը տուած հարցազրոյցում յայտարարել է, թէ Լեռնային Ղարաբաղում պատերազմից յետոյ ապրում է ընդամէնը 25 հազար մարդ:*

*Անդրադառնալով Եւրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելի տարածաշրջանային այցին եւ ԼՂ կարգավիճակի շուրջ խօսակցութիւններին՝ Ալիեւը, մասնաւորապէս, նշել է. Մենք ունենք բաւականին լայն եւ բազմակողմանի տեղեկութիւն այնտեղ (Լեռնային Ղարաբաղում-խմբ.) կատարուող գործընթացների մասին: Այնտեղ ապրողների իրական թիւը 25 հազար է: Այլ թուեր էլ են նշուել, թէ իբր պատերազմից յետոյ այնտեղ վերադարձել է 50 հազար մարդ: Հնարաւոր է, բայց վերադառնալ չի նշանակում այնտեղ մնալ,- ասել է Ալիեւը՝ եզրակացնելով, որ անտրամաբանական է 25 հազար մարդու համար կարգավիճակ քննարկելը:*

*Փաստերի ստուգմանը հարթակն ուսումնասիրել է Ալիեւի այս պնդումները:*

*Նշենք, որ ռուսական խաղաղապահ զօրախումբը պարբերաբար թուեր է ներկայացնում Արցախ վերադարձած քաղաքացիների մասին:*

*Այդպէս, ըստ այդ տուեալների, դեռեւս Փետրուարին աւելի քան 52 հազար անձ վերադարձել էր Արցախ: Ցատկանշական է, որ շատ քաղաքացիներ վերադարձել են նաեւ Վարդենիս-Քարվաճառ աւտոճանապարհով (մինչեւ տարածքի յանձնումը Ատրպէյճանանին), որտեղ այդ պահին ռուս խաղաղապահներ չեն եղել:*

*Ցատկանշական է, որ նոյն շրջանում Արցախի աշխատանքի, սոցիալական եւ բնակարանային հարցերի նախարարութիւնն այլ տուեալներ է յայտնել: Ըստ դրանց՝ Արցախ է վերադարձել մօտ 100 հազար մարդ: Նախարար Մանէ Թանդիլեանի խօսքով՝ տարբերութեան պատճառն այն է, որ խաղաղապահների հրապարակած տուեալները ձեւաւորւում են աւտոբուսներով վերադարձողների վիճակագրութեան հիման վրայ:*

*Վերադարձողների մի մասը*

Շար.ը էջ 6

## ԼՈՒՐԵՐ

# Քննիչ Յանձնաժողով Պիտի Ստեղծուի 44-Օրեայ Պատերազմի Վերաբերեալ. Ալեն Սիմոնեան

*«Նախեւառաջ քննարկեցինք գալիք աշխատանքը, ԱԺ-ի եւ կառավարութեան հետ համագործակցութիւնը: Որոշում է կայացուել, որ քննիչ յանձնաժողով է ստեղծուելու 44-օրեայ պատերազմի վերաբերեալ: Եւ այդ հարցում, կարծում ենք, նաեւ արտախորհրդարանական ընդդիմութեան մասնակցութիւնը նոյնպէս պէտք է լինի»,- այս մասին այսօր՝ Յուլիս 26-ի «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան նիստէն յետոյ լրագրողներու հետ զրոյցին ըսաւ ԱԺ փոխնախագահ՝ Ալեն Սիմոնեան:*



ԱԺ փոխնախագահ Ալեն Սիմոնեան

*Յիշեցնենք, որ այսօր ՀՀ վարչապետի պաշտօնակատար՝ Նիկոլ Փաշինեան նիստ գումարած է, որու ժամանակ հանդիպած էր «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան ընտրուած պատգամաւորներուն հետ:*

*Ալեն Սիմոնեան տեղեկացուց, որ նիստին քննարկուած են նաեւ տարբեր հարցեր, զուտ ԱԺ-ի կազմակերպչական, յանձնաժողովներու եւ կանոնադրութեան հետ կապուած հարցեր:*

# Ապօրինի Գոյքի Բռնագանձման Գործերով Նախկին Պաշտօնեաներու Ունեցուածքը Կալանքի Տակ Առնուած Է

*Երրորդ նախագահ՝ Սերժ Սարգսեանի եղբօր՝ Լեւոն Սարգսեանի դուստրը ու պետական գոյքի կառավարման վարչութեան նախկին պետ՝ Արման Սահակեանը հրաւիրուած են Գլխաւոր դատախազութիւն ապօրինի ծագում ունեցող գոյքի բռնագանձման գործերով: Թէ խօսքը մասնաւորապէս ինչ գոյքի մասին է, դեռ յայտնի չէ:*

*«Ազդարար» հրապարակային ծանուցումներու պաշտօնական կայքէջ տեղադրուած ծանուցագիրներու մէջ մանրամասնութիւններ չկան:*

*Սարգսեաններու քրէական գործերով զբաղող փաստաբան՝ Երեմ Սարգսեան «Ազատութիւն»ին ըսաւ, որ այս մասով ինքը դեռ համաձայնութիւն չունի մեկնաբանութիւն տալու: Անի Սարգսեանը, ինչպէս նաեւ անոր հայրը՝ Լեւոն Սարգսեան ու եղբայրը՝ Նարեկ Սարգսեան, կը մեղադրուին ապօրինի հարստանալու եւ յայտարարագրման ենթակայ գոյքը թաքցնելու համար: Լեւոն Սարգսեան կը հետախուզուի, անոր խափանման միջոց ընտրուած է կալանաւորումը: Դստեր՝ Անի Սարգսեանի ու որդիին՝ Նարեկ Սարգսեանի պարագային՝ ստորագրութիւնը չհեռանալու մասին:*

*Ազգային ժողովի նախկին նախագահ՝ Գալուստ Սահակեանի որդին՝ պետական գոյքի կառավարման վարչութեան նախկին պետ՝ Արման Սահակեան Յուլիս 28-ին հրաւիրուած է դատախազութիւն՝ ծանօթանալու ուսումնասիրութեան արդիւնքներուն ու ներկայացնելու իր դիրքորոշումը:*

*Սահակեանի փաստաբան Էմին Խաչատրեան տեղեկացուց, որ մինչ դատախազութիւն ներկայանալը իրենք խնդրած են ուսումնասիրութեան արդիւնքները, եւ արդէն ստացած են զանոնք: Ըստ փաստաբանին, գործի նիւթերը քանի մը հարիւր էջէ բաղկացած են, դեռ ամբողջութեամբ չեն հասցուցած ծանօթանալ անոր:*

*«Սահմանուած ժամկէտներում, բնականաբար, կը ներկայացնենք մեր պատճառաբանութիւնները, կը ներկայացնենք մեր ունեցած գոյքերի հիմքերը, այսինքն գոյքերի օրինական լինելու վերաբերեալ փաստաթղթեր», - ըսաւ փաստաբանը:*

*Խաչատրեան ըսաւ, որ Արման Սահակեանը արդէն յայտնած է իր դիրքորոշումը՝ չունի որեւէ ապօրինի գոյք: 2011-էն 2018 թուականը Պետական գոյքի կառավարման վարչութեան նախկին պետի պաշտօնը գրաւած Սահակեանը պնդած է, որ ձեռքբերած անշարժ ու շարժական գոյքերը օրինական են: Փաստաբանը ըսած է, թէ դատախազութիւնը կասկած ունի շուրջ 400 միլիոն դրամի գոյքի վերաբերեալ:*

*«Հիմա մենք մեր ձեռքի տակ ունենք մի շարք փաստաթղթեր, որոնք պէտք է նորից ուսումնասիրուեն, համադրուեն եւ արդիւնքում վերլուծուեն: Տեւական գործընթաց է լինելու, բայց ես համոզուած եմ, որ մենք հաւաստի եւ արժանահաւատ տեղեկատուութիւն կը ներկայացնենք տուեալ դէպքում Գլխաւոր դատախազութեան համապատասխան վարչութեանը, որպէսզի նրանք էլ ուսումնասիրեն եւ համոզուած եմ ապօրինի ծագման որեւէ գոյք չի յայտնաբերուի», - ընդգծեց Էմին Խաչատրեանը:*

*Արման Սահակեանը, յիշեցնենք, որ երեւանի նախկին քաղաքապետ Տարօն Մարգարեանի հետ միասին կ՚անցնի դպրոցներէն մէկու հողակտորի օտարման քրէական գործով: Ինչպէս Մարգարեանը, այնպէս ալ Սահակեանը մեղադրուած է պաշտօնէական լիազօրութիւնները չարաշահելու համար:*

*Ապօրինի գոյքի բռնագանձման գործերով կ՚անցնին շարք մը նախկին պաշտօնեաներ ու անոնց հարազատները: Գլխաւոր դատախազութիւնը կասկածներ ունի նախկին ոստիկանապետ՝ Վլատիմիր Գասպարեանի, անոր կնոջ, զոքանչի, դստեր, որդիի, գնդապետ Սե-*

Շար.ը էջ 5

# Փաշինեան Եւ Արտախորհրդարանական Ուժերը Գումարած Են Առաջին Նիստը



Նիկոլ Փաշինեանի մասնակցութեամբ արտախորհրդարանական քաղաքական ուժերու խորհրդակցական ժողովը

*Կայացած է արտախորհրդարանական քաղաքական ուժերու հետ համագործակցութեան խորհրդակցական ժողովի առաջին նիստը՝ վարչապետի պաշտօնակատար՝ Նիկոլ Փաշինեանի մասնակցութեամբ:*

*Նիստին մասնակցած են «Հանրապետութիւն» կուսակցութեան նախագահ՝ Արամ Սարգսեանը, «Ազատական» կուսակցութեան առաջնորդ՝ Սամուէլ Պապայեանը, «Ալեանս» առաջադիմական կեդրոնամէտ կուսակցութեան առաջնորդ՝ Տիգրան Ուրիխանեանը, «Արդար Հայաստան» կուսակցութեան ղեկավար՝ Նորայր Նորիկեանը, «Ինքնիշխան Հայաստան» կուսակցութեան ղեկավար՝ Դաւիթ Սանասարեանը, Հայաստանի եւրոպական կուսակցութեան ղեկավար՝ Տիգրան Խզմալեանը, Հայաստանի Քրիստոնեայ-դեմոկրատական կուսակցութեան նախագահ՝ Լեւոն Շիրինեանը, «Միասնական հայրենիք» կուսակցութեան նախագահ՝ Մհեր Տէրտէրեանը, Պահպանողական կուսակցութեան ղեկավար՝ Միքայէլ Հայրապետեանը, Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութեան Հայաստանի վարչութեան ատենապետ՝ Սեդրակ Աճէմեանը:*

*Նիկոլ Փաշինեան ողջունած է ժողովի մասնակիցները եւ մաղթած յաջող ու արդիւնաւէտ քննարկումներ:*

*Յիշեցնենք, որ խորհրդարանական արտահերթ ընտրութիւններէն յետոյ գործադիրի ղեկավարը սկսաւ հանդիպումներ ԱԺ չանցած ուժերուն հետ եւ որոշուեցաւ ձեւաւորել համագործակցութեան խորհրդակցական ժողով:*

# Սիւնիքի մէջ կը Փորձէին «Պետութեան Մէջ Պետութիւն Ստեղծել». Պատգամաւոր

*«Մարդիկ, օրինակ, Սիւնիքի մէջ, պետութեան մէջ պետութիւն արդէն կը փորձէին ստեղծել», «Ազատութիւն»ի Կիրակնօրեայ վերլուծական Հրայր Թամրազեանի հետ» հաղորդման ժամանակ յայտարարեց «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան անդամ՝ Գէորգ Պապոյեանը:*

*Այդ «գործընթացի ջախջախումը», պատգամաւորը ոչ թէ որոշ անձերու նկատմամբ հետապնդում կը համարէ, այլ «պետականաստեղծ գործընթացի»:*

*«Հայաստան» դաշինքը պնդած է, որ իրենց անդամները քաղաքական հալածանքներու կ՚ենթարկուին, որ անազատութեան մէջ գտնուող «Հայաստան» դաշինքի անդամները քաղաքական բանտարկեալներ են, այս հարցին Գէորգ Պապոյեանը պատասխանեց, որ ըստ քրէական գործերուն՝ այդ մարդոց մէկ մասը չարաշահումներ ըրած է, մէկ մասը քոռուփցիայով զբաղած է, մէկ այլ հատուած կաշառք բաժնած է եւ « կարծում եմ, որ, կը ներէք, բայց ծիծաղելի է ընտրակաշառք բաժանողին, քոռուփցիայով զբաղուողին, մարդկանց ստիպողաբար ընտրութեան ուղարկող մարդկանց, որոնք ըստ էութեան բդեշխների են վերածուել իրենց տարածքներում, ժամանակի ընթացքում այդ մարդկանց քաղբանտարկեալ, կամ քաղհալածեալ համարել: Եւ, գիտէք, անգամ այդ պարագայում, անգամ այդ ճնշումների պարագայում հենց նոյն սիւնեցիները տուեցին արժանի պատասխան այդ մարդկանց, եւ այսօր, եթէ նկատել էք, բացի մի քանի սահմանափակ թուով մարդիկ, որոնք «Հայաստան» դաշինքի անդամներ են, բացի իրենցից, ժողովրդի մէջ ոչ ոք չի համարում, որ այդ մարդիկ քաղբանտարկեալներ են: Ես էդ մարդկանց քրէական գործերին ծանօթ չեմ, բայց ամէն դէպքում մտնենք սովորական ժողովրդի մէջ եւ հարցնենք, ես մէկին չգիտեմ, որ այդ մարդկանց համարում է քաղբանտարկեալ: Քաղբանտարկեալը 2008 թուականի Մարտի 1-ից յետոյ բանտերում յայտնուած մարդիկ էին, իմ կարծիքով, պէտք չէ այստեղ հաւասարութեան նշան դնել»:*



«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցութեան անդամ՝ Գէորգ Պապոյեան

# ԼՈՒՐԵՐ

## Ալիեւը Նեղսրտած է ԵՄ-ի՝ Հայաստանին Յատկացուելիք 2.6 Միլիառ Եւրօ Աջակցութեան Համար

*Ատրպէյճանի նախագահ՝ Իլհամ Ալիեւը նախօրէին պետական AzTV-ին տուած հարցազրոյցին մէջ անդրադարձած է նաեւ ԵՄ-ի կողմէ Հայաստանին տրամադրուելիք աջակցութեան: Ան նշած է, որ Հայաստանին կը յատկացնեն 2.6 միլիառ եւրօ, Վրաստանին՝ 2.3 միլիառ եւրօ, իսկ Ատրպէյճանին՝ ոչինչ:*

*«Ինչ կը վերաբերի Ատրպէյճանին, ապա հնչեցուած է 150 միլիոն եւրօ թիւը, բայց մեզի չեն ըսած ճիշդ երբ պիտի ըլլայ այդ յատկացումը, որոնք են յատկացման պայմանները: Ի հարկէ, կը կարծեմ, որ այս սխալ դիրքորոշում է, քանի որ Ատրպէյճանը Հարաւային Կովկասի ամենամեծ երկիրն է՝ ե՛ւ տարածքով, ե՛ւ բնակչութեամբ, ե՛ւ հնարաւորութիւններով: Մինչ այժմ տարածաշրջանի երկիրներուն այդքան խոշոր գումարներ չեն յատկացուած: Սա կը վկայէ այն մասին, որ այս միջոցները պատերազմէն ետք կը յատկացուին, այսինքն՝ պատճառը պատերազմն է: Եթէ այդպէս է, ապա պատերազմէն ամենաշատ տուժած երկիրը Ատրպէյճանն է: Այդ միջոցները պէտք է յատկացուին Ատրպէյճանին»,- ըսած է Ալիեւը՝ բողոքելով, որ Հայաստանին այդքան մեծ գումար պիտի յատկացուի:*

*«Գումարը կու տան Հայաստանին. կա՞ն Հայաստանի մէջ աւերածութիւններ՝ ո՛չ: Մե՞նք այնտեղ ականներ դրած ենք՝ ո՛չ: Սա անարդար է: Այդ հարցով կարծիքներու փոխանակում եղած է: Պատասխանը հետեւեալն, որ, իբր, Ատրպէյճանին միջոցներ պէտք չեն: Առաջինը՝ մեզի ոչ ոք առաջարկած է: Առաջարկեցէք մեզի, եւ ես կ'ըսեմ, պէտք են, թէ՝ ոչ: Մենք պիտի չվերականգնե՞նք «ազատագրուած տարածքները»: Միլիառաւոր տոլարներ պէտք են, որոնք բնականաբար երկինքէն պիտի չիջնեն»,- ըսած է Ատրպէյճանի նախագահը:*

*Ան նշած է, որ Ատրպէյճանը ինքնաբաւ երկիր է, սակայն եթէ Հայաստանի պէս դրամաշնորհ առաջարկեն, ապա երբեք չեն հրաժարիր:*

## Այս Տարուայ Յունիսին Աշխատատեղերու Ամենաբարձր Ցուցանիշը Արձանագրուած է

*2021-ի Յունիսի տուեալներով՝ եկամուտ (հարկման պագա) ապահոված աշխատատեղերու թուաքանակը կազմած է շուրջ 643 հազար, ինչ որ 2021-ի Մայիսի համեմատ՝ աւելի է շուրջ 8 հազարով, 2020-ի Յունիսի համեմատութեամբ՝ 34 հազարով, 2019-ի Յունիսի համեմատութեամբ՝ 37.5 հազարով, 2018-ի Մայիսի համեմատութեամբ՝ 80 հազարով, տեղեկացուցած է Պետական եկամուտներու կոմիտէն (ՊԵԿ):*

*Ըստ ՊԵԿ-ին՝ 2021-ի Յունիսին՝ նախորդ տարիներու նոյն ամիսներու համեմատութեամբ, աճած է նաեւ աշխատատեղերու գիծով յայտարարագրուած եկամուտը (հարկման պագան)՝ կազմելով շուրջ 139 միլիառ դրամ, որ կը գերազանցէ 2020-ի Յունիսի նոյն ցուցանիշին՝ 15 տոկոսով, 2019-ի Յունիսի ցուցանիշին՝ 23 տոկոսով, իսկ 2018-ի Յունիսի ցուցանիշին՝ 40 տոկոսով:*

*2021-ի Յունիսին, նախորդ տարիներու նոյն ամսուայ համեմատ, աճած է նաեւ մէկ աշխատատեղին բաժին հասնող եկամուտը (հարկման պագան)՝ կազմելով շուրջ 216 հազար դրամ: 2020-ի Յունիսի այս ցուցանիշը կազմած է 198 հազար դրամ, 2019-ին՝187 հազար դրամ, իսկ 2018-ին՝177 հազար դրամ:*

*ՊԵԿ-ը յիշեցուցած է, որ 2020-ի Սեպտեմբերին համար եկամուտ ապահոված աշխատատեղերու թիւը կը կազմէր շուրջ 632 հազար, որ, կոմիտէի գնահատմամբ, աննախադէպ էր, իսկ Հայաստանի վիճակագրական պատմութեան մէջ արձանագրուած ամենաբարձր ցուցանիշն էր, սակայն, ինչպէս ՊԵԿ-ը կ'ընդգծէ, 2021-ի Մայիսին գերազանցուած է այդ ցուցանիշը՝կազմելով շուրջ 635 հազար:*

*«Արդէն իսկ կարող ենք նշել, որ ամենաբարձր ցուցանիշը գրանցուել է 2021-ի Յունիսին (643 հազար)՝ գերազանցելով նաեւ 2021-ի Մայիս ամսուայ ցուցանիշը», - ըսուած է հաղորդագրութեամբ:*

## Վիքթորիա Նուլանտ Արձագանգեց ԼՂ Հակամարտութեան Սուրիացի Ջինեալներու Ներգրաւման Խնդրին



ԱՄՆ-ի պետական քարտուղարի տեղակալ՝ Վիքթորիա Նուլանտ

*ԱՄՆ-ի Ծերակուտականի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովէն ներս կայացան լսումներ «Թուրքիոյ նկատմամբ Միացեալ Նահանգներու քաղաքականութիւնը» վերնագրով, տեղեկացուցած է «Ամերիկայի ձայնը»:*

*Լսումներուն, որպէս պատասխանող կողմ հանդէս եկած է քաղաքական հարցերով ԱՄՆ-ի պետական քարտուղարի տեղակալ՝ Վիքթորիա Նուլանտը, իսկ քննարկումը կը նախագահէր Ծերակուտականի արտաքին յարաբերութիւններու յանձնաժողովի նախագահ, ծերակուտական՝ Պապ Մենենտըսը: Վերջինս լսումներու ընթացքին հարց բարձրացուցած է Լեռնային Ղարաբաղի վերջին հակամարտութեան ընթացքին Թուրքիոյ ներգրաւուածութեան, մասնաւորապէս սուրիացի զինեալներուն հակամարտութեան գօտի տեղափոխման շուրջ:*

*«Թոյլ տուէք ուղղել մէկ հարց եւս: Արդեօ՞ք տեղեակ էք, որ Թուրքիան նպաստած է Սուրիայէն դէպի Ատրպէյճան զինեալներու տեղափոխման 2020 թուականին Լեռնային Ղարաբաղի պատերազմի ժամանակ»,- հարց ուղղած է ծերակուտական Մենենտըս:*

*Ի պատասխան, քաղաքական հարցերով ԱՄՆ-ի պետական քարտուղարի տեղակալ Նուլանտ առաջարկած է այս հարցը դարձնել առանձին քննարկման առարկայ:*

*«Կը կարծեմ, որ աւելի յարմար կ'ըլլար ձեր նշած այս դրոյթը քննարկել առանձին առիթով մէկ այլ պայմաններու մէջ, եթէ այդ ձեզի համար ընդունելի է, պարոն Նախագահ»,- պատասխանած է Նուլանտ:*

*Ծերակուտական Մենենտըս դրական արձագանգած է՝ աւելցնելով, որ անոր հետ մէկտեղ կը սպասէ պետական քարտուղարութեան արձագանգին պատերազմի օրերուն Ատրպէյճանի կողմէ թրքական անօդաչու թռչող սարքերու կիրառման մասին:*

*«Շատ լաւ: Որպէս անոր մէկ մաս, ես նաեւ անհամբեր կը սպասեմ պետական քարտուղարութեան արձագանգին, թէ արդեօք ուսումնասիրած էք Ատրպէյճանի կողմէ պատերազմին օգտագործուած թրքական անօդաչու թռչող սարքերու գործածման հարցը: Այն կը ներառէր ԱՄՆ-ի մէջ արտադրուած մասեր, որ ես կը համարեմ բոլորովին անընդունելի»,- արձագանգած է Մենենտըս:*

## Անգարան Բոլոր Ուժերով Աջակցած Է Պաքուին, Կը Շեշտէ Թուրք Պաշտօնեան

*Թուրքիոյ իշխող «Արդարութիւն եւ զարգացում» կուսակցութեան փոխնախագահ՝ Նուման Քուրթուլմուշը Պաքուի մէջ յայտարարած է, թէ Հարաւային Կովկասի խնդիրները պէտք է լուծուին տարածաշրջանի երկիրներու կողմէ:*

*Թրքական «Անատոլու» գործակալութեան հաղորդմամբ՝ Քուրթուլմուշ ըսած է, թէ Երեւանը պէտք է հրաժարի տարածաշրջանային խնդիրներու լուծումը Հարաւային Կովկասէն դուրս փնտռելու «սովորութենէն», եւ կրկնած է վեց երկիրներու ձեւաչափով համագործակցութեան հարթակ ստեղծելու Թուրքիոյ նախագահի գաղափարը:*

*«Համոզուած եմ, որ փոխգործակցութեան ամենաճիշդ ուղին վեցի հարթակն է՝ Թուրքիոյ, Ռուսաստանի, Իրանի, Ատրպէյճանի, Հայաստանի ու Վրաստանի մասնակցութեամբ: Բոլոր խնդիրներն ու տարաձայնութիւնները պէտք է լուծուին տարածաշրջանի երկիրներու կողմէ», - ըսած է Թուրքիոյ իշխող կուսակցութեան փոխնախագահը, նշելով, թէ Երեւան վերջապէս պէտք է գիտակցի, որ լարուածութեան նոր օճախներու ստեղծումը ոչ մէկ օգուտ կը բերէ Հայաստանի ժողովուրդին:*

*Ատրպէյճանական լրատուամիջոցները լրագրողներու հետ Քուրթուլմուշի զրոյցէն այլ շեշտադրումներ առանձնացուցած են, մասնաւորապէս Թուրքիոյ եւ Ատրպէյճանի մասով: APA գործակալութեան հաղորդմամբ՝ ան յայտարարած է. - «Մենք բոլոր ուժերով աջակցած ենք Ատրպէյճանին ղարաբաղեան պատերազմի ժամանակ»: Իսկ յետպատերազմեան իրավիճակի մասին ըսած է, թէ տարածաշրջանի կայունութիւնը եւ զարգացումը կ'ապահովուի Թուրքիոյ ու Ատրպէյճանի համատեղ ջանքերու շնորհիւ:*

*Ըստ այս հաղորդագրութեան՝ Քուրթուլմուշը Հայաստանին ապաւինած դուրսի ուժերուն կարգին դասած է նաեւ սփիւռքը, ըսելով, թէ Հայաստանը պէտք չէ յոյսը դնէ արտաքին ուժերու, անոնց կարգին՝ սփիւռքի վրայ: Ատրպէյճանի հետ յարաբերութիւններու կարգաւորումը պէտք է տեղի ունենայ քննարկումներու միջոցով, իսկ զսպուածութիւնը, ըստ թուրք գործիչին, Հայաստանին օգտին է:*

*Թրքական պատուիրակութիւնը այցելած է «Նահատակներու ծառուղի» եւ թուրք զինուորի յուշարձանը:*

*«Մենք յարգանքի տուրք կը մատուցենք Կովկասեան իսլամական բանակի նահատակներուն: 99 տարի առաջ անոնք կռուած են Ատրպէյճանի ազատութեան համար», - յայտարարած է Թուրքիոյ իշխող կուսակցութեան փոխնախագահը:*

## Երեւան Կը Հակադարձէ Պաքուին

Շարունակուած էջ 1-էն

*զօրամիաւորումները ներթափանցել են Հայաստանի Հանրապետութիւն այն տարածքներից, որի հանդէպ Ատրպէյճանը վերահսկողութիւն է հաստատել Նոյեմբերի 9-ի յայտարարութեան իրականացման հետեւանքով: Այսինքն՝ յայտարարութիւնն իրականացնելու հայկական կողմի կառուցողական մօտեցմանը Ատրպէյճանը հակադրել է Հայաստանի տարածքային ամբողջականութեան հանդէպ ոտնձգութիւն իրականացնելու՝ տարածաշրջանային անվտանգութիւնը եւ խաղաղութիւնը խաթարելու քաղաքականութիւն: Այն փաստը, որ ատրպէյճանական զօրամիաւորումները գտնւում են Հայաստանի տարածքում, ըստ էութեան, ընդունել է Ատրպէյճանի նախագահը՝ նշելով, որ «Զանգեզուրը մեր նախնիների հողն է»: Վերջին շրջանում Ատրպէյճանը հանդէս է գալիս Լեռնային Ղարաբաղի տարածքային միաւոր լինելու ժխտման յայտարարութիւններով, ինչն իր հերթին խախտում է յայտարարութեան 7-րդ կէտը, որտեղ կողմերը, այդ թւում՝ Ատրպէյճանը համաձայնուել է «Լեռնային Ղարաբաղի տարածք» եզրոյթին», - յայտարարած է արտաքին գործոց նախարարութիւնը:*

*Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութիւնը շեշտած է,- «Ցաւօք, Հայաստանի նման կառուցողական մօտեցումը ատրպէյճանական կողմը հանրային պաշտօնական յայտարարութիւններով հետեւողականօրէն չահարկել եւ փորձել է շրջանառութեան մէջ դնել «միջանցքի բացման» գաղափարը, ինչն անընդունելի է եւ ամբողջովին աղաւաղում է եռակողմ յայտարարութիւնների բովանդակութիւնը եւ նպատակը:*

# Ատրպէյճանական Սեւ Շուկայ

## Կամ Դէպի Ո՞ւր Կ՛ուղղուին Արեւմուտքի Զէնքերը. Bulgarian Military

Միացեալ Նահանգներու նախագահ՝ Ճօ Պայտըն 2021-ի Ապրիլին երկարացուց Ատրպէյճանին ռազմական զինատեսակ եւ զինամթերք վաճառելու արգելքի կասեցումը: ԱՄՆ-ի պետական քարտուղար Էնթընի Պլենքընի խօսքով՝ Պաքուի զինամթերքի արտահանումը կարեւոր է միջազգային ահաբեկչութեան դէմ պայքարին Ուաշինկթընի ջանքերուն սատարելու տեսանկիւնէ, սակայն մեծ թիւով փորձագէտներ ու քաղաքական գործիչներ կասկածամտօրէն կը մօտենան Սպիտակ տան դիրքորոշման նպատակայարմարութեան: Մասնաւորապէս ԱՄՆ-ի քոնկրէսական Ատամ Շիֆը, քննադատելով Ատրպէյճանին զէնքի մատակարարման արգելքը վերացնելու որոշումը, արձանագրած է, որ ատրպէյճանական իշխանութիւնները, պարբերաբար ռազմական աջակցութիւն ստանալով ԱՄՆ-էն կամ ԵՄ անդամ որեւէ երկրէն, ոչ միայն կը թաքցնեն փաստը, որ Լեռնային Ղարաբաղի մէջ զինամթերքը պիտի ուղղուի հայերու դէմ, այլեւ այդ զէնքի որոշ մասը պիտի վաճառեն երրորդ երկիրներուն, ահաբեկիչներուն կամ սեւ շուկայի մէջ:

Ռազմական ու պաշտպանական լուրերու պուլկարական հետազօտական ու վերլուծական Bulgarian Military հարթակը «ատրպէյճանական սեւ շուկայ. ո՞ւր կ՛ուղղուին Արեւմուտքի զէնքերը» խորագրով անդրադարձած է Ատրպէյճանի կողմէ սեւ շուկային մէջ զէնք վաճառելու փաստին՝ փորձելով հասկնալ, թէ որքանո՞վ նպատակայարմար է Արեւմուտքի երկիրներու կողմէ զէնքի վաճառքը Ատրպէյճանին ու թէ ո՞ւր ու ի՞նչ նպատակներով անոնք կրնան կիրառութիւն ստանալ:

«Շատ ապացոյցներ արդէն հրապարակուած են, որոնք ցոյց կու տան Ատրպէյճանի կողմէ սեւ շուկայի մէջ զէնքի անօրինական շրջանառութեան փաստը: Օրինակ, Պաքուն 2017 թուականին, որպէս կանոնաւոր զօրավարժութիւններու մաս, ցոյց տուաւ չեխական MLRS RM-70 համազարկային կրակի համակարգեր, որոնք, համաձայն չեխ պաշտօնեաներու յայտարարութիւններուն, այդ երկիրը պարզապէս չէր կրնար ունենալ՝ հաշուի առնելով Չեխիոյ Հանրապետութեան գործող օրէնքները: Այդ ժամանակ Հայաստանը արդէն իսկ կը բարձրաձայնէր Լեռնային Ղարաբաղի մէջ այդ ռազմական համակարգերու յայտնուելու մասին, եւ այդուհանդերձ Չեխիոյ արտաքին գործոց նախարարութիւնը պաշտօնապէս յայտարարեց նման գործարքի անհնարինութեան մասին: Որպէս արդիւնք,



ռազմական փորձագէտները սկսան տեսակէտներ յայտնել այն մասին, որ զինամթերքը ձեռք բերուած է ապօրինի ճանապարհով»,- գրած է Bulgarian Military-ն:

Հարթակը կը փաստէ, որ շատ վերլուծաբաններ հիմնաւոր կասկածներ ունին, որ Պաքուն Սուրիոյ եւ այլ թէժ կէտերու մէջ զէնք ու զինամթերք կը մատակարարէ «Իսլամական պետութիւն» ահաբեկչական կազմակերպութեան զինեալներուն: Այդ մասին հետաքննական յօդուած հրապարակեց պուլկարացի լրագրող՝ Տիլեանա Կայթանճիեւան՝ բացայայտելով Anonymous Bulgaria ցանցահէններու խումբի կողմէ ստացուած գաղտնի տեղեկատուութիւնը, որու համաձայն ատրպէյճանական Silk Way Airlines օդանաւային ընկերութիւնը զինամթերք տեղափոխած է Սէուդական Արաբիա, իսկ այդ երկրէն զէնքը փոխանցուած է Եէմէնի սէուտամէտ ուժերուն, Սուրիոյ զինեալներուն, ինչպէս նաեւ տեղափոխուած Մալի, Պուրքինա Ֆասօ եւ Աֆղանիստան:

Ուշագրաւ է, որ այս տեսակէտը կը պաշտպանեն նաեւ Ատրպէյճանի ընդդիմադիր վերլուծաբանները: Համաձայն Timeturk գործակալութեան տուեալներուն՝ Ատրպէյճանը ձեւաւորած է «Մահմութ» զինեալ խմբաւորումը, որ կը մասնակցի Սուրիոյ մէջ Պաշար Ասատի դէմ ռազմական գործողութիւններուն: Ատրպէյճանի կողմէ ձեռք բերուած զէնքերու մեծ մասը նմանօրինակ խմբաւորումներու միջոցով, ոչ առանց թրքական կողմի աջակցութեան, կը յայտնուի «Իսլամական պետութիւն» խմբաւորման ձեռքը ու այդպիսով կը տարածուի ողջ աշխարհով:

«Հետեւաբար կ՛առաջանայ ողջամիտ հարց՝ արդեօք ԱՄՆ-ին անհրաժեշտ են նմանօրինակ օրէնքներ, որոնք կ՛օրինականացնեն միապետական ռեժիմներուն զինամթերքի մատակարարումը: Ամերիկացի պատմաբան, Antiwar վերլուծական կայքի խմբագիր՝ Տանիէլ Լարիսոնը վստահ է, որ ԱՄՆ անոր կարիքը չունի: Ան կոչ ըրած է Ուաշինկթընին սկսելու մշակել իրաւական մեքենականութիւններ, որոնք թոյլ կու տան արգիլել ՆԱԹՕ-ի զինամթերքի մատակարարումը Ատրպէյճանին, քանի որ Պաքուին ռազմական աջակցութիւն ցուցաբերելը իրական վտանգ է Կովկասի իրադրութեան խաթարման տեսանկիւնէն:

Այսինքն, եթէ ԱՄՆ եւ եւրոպական երկիրները իսկապէս կը ցանկան արդարացնել արտաքին քաղաքական ոլորտին մէջ մարդու իրաւունքներու պաշտպանութեան իրենց յանձնառութիւնը եւ հակազդել միջազգային ահաբեկչութեան, անոնք պէտք է սկսին բարեփոխել իրենց օրէնսդրական համակարգերը, մասնաւորապէս, դադրեցնելով ցանկացած ռազմական աջակցութիւն Ատրպէյճանին»,- գրած է Bulgarian Military-ն:

Հարթակը անդրադարձած է նաեւ փաստին, որ Սուրիոյ մէջ Թուրքերու կողմէ աջակցութիւն ստացող զինեալ խմբաւորման անդամները ատրպէյճանական կողմը յայտնուած էին 2020 թուականի Արցախի մէջ ծաւալուած պատերազմական գործողութիւններուն: Ուաշինկթընի մէջ գործող CNA հետազօտական կեդրոնի ռազմական փորձագէտ՝ Մայքըլ Քոֆմանի կարծիքով՝ օգտագործելով «Իսլամական պետութիւն» եւ «Ալ-Քաիտա» ահաբեկչական խմբաւորումներու հետ սերտ կապերու մէջ գտնուող սուրիացի զինեալները Արցախի մէջ, Ատրպէյճանը նպատակ ունեցած է նուազագոյնի հասցնելու սեփական կորուստները: Իսկ Ուաշինկթընի մէջ գործող մէկ այլ կեդրոնի՝ Center of global policy-ի փորձագէտ Էլիզապէթ Ցուրկովը, որ հարցաքննած է հակամարտութեան մասնակից քանի մը տասնեակ սուրիացիներ, հաստատած է, որ անոնք արցախեան վերջին պատերազմին օգտագործուած են որպէս «թնդանօթի միս»՝ մասնաւորապէս հարաւային հատուածներու ռազմական գործողութիւններու ժամանակ:

«Կասկածէ վեր է, որ թրքական իշխանութիւնները Ատրպէյճանի հետ մարտահրաւէր նետած են համաշխարհային հանրութեան՝ բացայայտ շահագործելով զինեալները: Պաքուն հազիւ թէ կարողանայ մաքրել հեղինակութիւնը ահաբեկիչներու հետ համագործակցութեան ստուերէն, համագործակցութիւն, որու նպատակն էր գրաւել Լեռնային Ղարաբաղը: Իսկ Հիւսիսատլանտեան դաշինքի Թուրքիոյ գործընկերները իրենց հերթին պէտք է մտածեն, թէ որքանով նպատակայարմար է հետագայ ռազմական ու արհեստագիտական համագործակցութիւնը Անգարայի հետ, յատկապէս Յունիսին ռազմական համագործակցութեան վերաբերեալ ատրպէյճանա-թրքական համաձայնագրի կնքման ֆոնին, որ Պաքուի համար կ՛ընդլայնէ ՆԱԹՕ-ի ժամանակակից զէնքերու հասանելիութիւնը: Ո՞վ կ՛իմանայ, թէ վաղը որու դէմ անոնք կրնան օգտագործուիլ»,- եզրափակած է յօդուածը Bulgarian Military-ն:

## Ապօրինի Գոյքի Բռնագանձման Գործերով

Շարունակուած էջ 3-էն

րոբ Յարութիւնեանի, անոր որդիին, ինչպէս նաեւ հետախուզման մէջ գտնուող, բնապահպանութեան նախկին նախարար՝ Արամ Յարութիւնեանի գոյքերու օրինականութեան վերաբերեալ:

Դատախազութեան խնդրանքով դատարանը կալանքի տակ առած է անոնց: Այս կը կատարուի, որպէսզի ենթադրաբար ապօրինի ծագում ունեցող գոյքը չվաճառուի կամ նուիրուի մէկ ուրիշին: Ըստ Գլխաւոր դատախազութեան, առաջիկայ ժամանակահատուածին ապօրինի գոյքի բռնագանձման վերաբերեալ առաջին գործերը կ՛ուղարկուին դատարան՝ գոյքերու օրինականութիւնը պարզելու համար: Ապօրինի գոյքի բռնագանձման վարոյթը կրնայ նաեւ հաշտութեամբ աւարտիլ, եթէ քաղաքացին համաձայնի պետութեան վերադարձնել ապօրինի ծագում ունեցող գոյքի արժէքի 75 տոկոսը:

## Արցախի Մէջ Այժմ Կ՛ապրի 120 Հազար Հայ

Շարունակուած էջ 1-էն

լու հարցերը:

Մանէ Թանդիլեանի կարծիքով՝ Ալիեւի յայտարարութիւնը արցախահայութեան՝ հայրենիք ապրելու կամքը նսեմացնելու անյաջող փորձ է: Ըստ Արցախի Աշխատանքի եւ ընկերային հարցերու (Սոցապ) նախարարին, Ատրպէյճանի նախագահը անթաքոյց բացայայտած է, որ բնակիչներու թիւը նշանակութիւն ունի ղարաբաղեան խնդրի կարգաւորման գործով:

«Եթէ նկատում էք, Ալիեւը փորձում է այդ հարցը փակուած համարել նաեւ իր խօսքերի մէջ բացայայտելով, որ այն չի կարող փակուած լինել, քանի որ այնտեղ կան ապրող քաղաքացիներ: Եւ ահա արցախահայութիւնը իրենց կամքի, իրենց երկրում ապրելու, իրենց մեծ ցանկութեան եւ հաստատակամութեան շնորհիւ նաեւ իրենց պարտքն են հատուցում մեր զոհուած զինուորներին՝ ապրելով Արցախում, բնակուելով, տեղափոխուելով իրենց հայրենիք», - ընդգծեց Մանէ Թանդիլեան:

Թանդիլեանի խօսքով՝ Արցախի մէջ այժմ բնակարանաշինական ծրագիրներ կ՛իրագործէ Սոցապ նախարարութիւնը, օրինակ, ծրագիր մը կ՛իրագործէ, որով գիւղերը բնակիլ ցանկացողներուն համար կը վերանորոգուին կիսաքանդ տուները.- «Նաեւ այդ ծրագրի շրջանակներում բազմաթիւ ընտանիքներ են վերադարձել եւ քաղաքներում այսօր՝ Մարտունի, Մարտակերտ, Ստեփանակերտ քաղաքաշինութիւն է ընթանում, նաեւ նոր բնակավայրեր են կառուցւում, լայնածաւալ շինարարական աշխատանքներ են ընթանում Արցախում, եւ կառավարութիւնը յայտարարել է, որ երեք տարուայ ընթացքում պատրաստւում է առաւելագոյնս ապահով տեղահանածների բնակարանային ապահովումը», - նշեց Թանդիլեան:

Ատրպէյճանի նախագահի յայտարարութիւններուն անդրադարձած է նաեւ Արցախի պետական նախարար, մարդու իրաւունքներու նախկին պաշտպան՝ Արտակ Բեգլարեանը՝ նշելով, որ Արցախի բնակչութեան թիւի մասին իր պնդումով Ալիեւ կը խոստովանի ու կ՛ընդունի, որ Արցախի ճակատագիրն ու ապագան կախուած է Արցախի բնակչութենէն, եւ կը փորձէ պարզունակ հնարքով կեղծել իրականութիւնը:

# Հայաստան Համահայկական Հիմնադրամ Տեղեկագիր Արցախում Բնակարանաշինական Ծրագրերի Մասին









*Արցախից տեղահանուած ընտանիքների խնդիրների մեղմացումն ու լուծումը Հիմնադրամի առաջնահերթութիւններից ենգ այս նպատակով Հիմնադրամն Արցախում մեկնարկել է լայնածաւալ բնակարանաշինութեան ծրագիր:*

*Կրթութեան, Գիտութեան, Մշակոյթի եւ Սփորթի (ԿԳՄՍ) նախարար՝ Վահրամ Դումանեան ըսաւ. «Նրա անուն ազգանունը՝ Ճիւան Գասպարեան, արդէն ամէն ինչ ասում է նրա մասին: Ես չէ, որ պէտք է գնահատեմ իր արուեստը, էն ինչ-որ ինքը արեց՝ տուտուկի ընկալումը, տուտուկի գաղտնիքները: Տուտուկը նոր չի ստեղծուել, բնականաբար, վաղուց եղել է, բայց նման ընկալում, որ այսօր հայկական տուտուկը ունի աշխարհում ի շնորհիւ Ճիւան Գասպարեանի այժմ լրիւ այլ ընկալում ունի եւ հպարտութիւն է»:*

*Մշակոյթի փոխնախարար՝ Արա Խզմալեանի համոզմամբ՝ հայկական ազգային երաժշտական գործիքի՝ տուտուկի եւ հայկական ազգային երաժշտութեան միջոցով Ճիւան Գասպարեանի միջազգային ճանաչումը անոր մեծ տաղանդի արդիւնքն էր. «Պարզապէս ծնունդով իր մէջ կրում էր հայութեանը ամենայատուկ մեղեդին, ծնունդով իր հետ բերած էր այդ մեղեդին եւ տուտուկի միջոցով դրսեւորեց այդ մեղեդին»:*

*«Ակունք» ազգագրական համոյթի հիմնադիր եւ երկարամեայ ղեկավար Սարգիս Պաղտասարեանի խօսքով. «Մեզ համար անդառնալի կորուստ է, նշանակում է, որ բնական եւ ոչ բնական մահերի պատճառով գունաթափւում է մեր քաղաքը»:*

*Երգչուհի՝ Յասմիկ Յարութիւնեանը նշեց. «Ճիւանի տուտուկի հնչողութիւնը տարբերւում էր, ի՞նչ ասեմ, ամէն մի մարդ հասկանում էր ե՛ւ Վաչէ Յովսէփեանի նուագը, ե՛ւ Ճիւան Գասպարեանի, ե՛ւ նոր սերնդինը»:*

# Պորտաբոյծ Հայը (Պատմուածք)

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

- Հայկական տարբեր վայրերում (խանութ, հաւաքատեղի, եւ այլն) յաճախ եմ հանդիպում անծանօթ մարդկանց, որոնք ճանաչում են ինձ ու փորձում մտերմանալ: Պատահում է, որ ոմանք (ոչ թէ՝ ՈՐՈՇՆԵՐ,- ՀԵՆ. Ա.) հետագայում դառնում են մտերիմ ընկերներ:

Սակայն լինում են նաեւ ծանօթութեան դէպքեր, որոնք ծանր հետք են թողնում իմ մտապատկերում: Նման «ծանօթներին» աշխատում եմ ջնջել իմ յիշողութիւնից, բայց այս ծանօթութեան դէպքը հազիւ թէ կարողանամ մոռանալ:

Հոլիվուտի մարզասրահից դուրս գալիս, դիմացս ելաւ անծանօթ մի տղամարդ, որն ակնյայտօրէն շտապում էր մարզասրահ մտնել, ու ակամայից, դռների արանքում, առանց զգալու՝ կոպտօրէն հրեց ինձ: Չէի հասցրել դիտողութիւն անել, երբ վերջինս շրջուելով դէպի ինձ՝ ասաց.

- Ներողութիւն պարոն-, օ՜, պարոն Անասեա՞ն, մաեստրօ, այդ դո՞ւք էք, ներեցէք-, ես սրբիչս մոռացել եմ ներսում, ես-, նորից կը ներէք-, ես երկու րոպէից կը վերադառնամ, մի քիչ կը զրուցենք, լա՞ւ-, ի հարկէ, եթէ ժամանակ ունէք:

Իսկապէս էլ, մի քանի րոպէ անց երեւաց մեր հայրենակիցը:

- Ես ամէն օր եմ գալիս այստեղ, բայց ձեզ երբեք չեմ տեսել,- ասաց նա:

- Իսկ ես՝ ոչ միշտ: Ընդհանրապէս՝ շաբաթը երկու-երեք անգամ, պարզապէս, երբ ժամանակ ունենամ:

- Ես միշտ կարդում եմ ձեր գրութիւնները, տելեվիզորով էլ էք յաճախ երեւում: Չափազանց ուրախ եմ ձեզ մօտիկից ծանօթանալու համար:

Մի քիչ դէսից-դէնից խօսելուց յետոյ, ներքին մի ձայն ինձ յուշեց, որ այս հայրենակիցը մեքենակ չունի, եւ, երեւի օգնութեան կարիք ունի, ուստի անմիջապէս հարցրի.

- Դուք մեքենայ ունէ՞ք:

- Իհա՛րկէ ունեմ, էն էլ՝ երկուսը, մէկը՝ «Մերսեդէս», իսկ միւսը՝ «Իմպալա», բայց միշտ նախընտրում եմ ավտոբուսով գնալ-գալ, այդպէս շատ էժան է նստում:

- Սպասիր բարեկամ, Հոլիվուդում չե՞ս ապրում, հեռուս ո՞րն է: Ավտոբուսն էլ էժան չէ,- փորձում եմ հակադրուել խօսակցիս:

- Չէ՜, ի՞նչ էք ասում, մեզ ոչինչ գնով ավտոբուսի տարեկան տոմս է հասնում, դեռ հետն էլ որոշ գումար՝ տակսիից օգտուելու համար: Ես եւ կինս թոշակառու ենք, արտօնեալ պայմաններ ունենք: Բժշկի մօտ էլ գնում ենք իրենց ուղարկած մեքենայով: Մեր մեքենան օգտագործում ենք միայն հեռու տեղեր գնալիս, կամ Ամերիկայի տարբեր շրջաններ ու քաղաքներ ճամբորդելիս: Այստեղի գործերի համար էլ՝ պատահում է տակսի ենք պատուիրում, դրա համար էլ է կառավարութիւնը վճարում: «Հոգին սիրեմ Ամերիկայի»,- այսպէս են ասում չէ՞ Ախպարները-

- Դէ՜՜.., դէ՜-, այդպէս չղաւ բարեկամ, եթէ նման ձեւով ենք շարունակելու մեր խօսակցութիւնը՝ ուրեմն արի այս վայրկեանին իսկ հրաժեշտ տանք միմեանց,- հազիւ զսպելով արգահատանքի զգացումս,- ասացի ես:

- Ե՜ս-ես-, ես ներողութիւն եմ խնդրում պարոն Անասեան, ես պարզապէս կատակի համար ասացի:

- Խնդրում եմ նման կատակ այլեւս չանել ինձ մօտ: Մենք շատ ենք տուժել այդ բառի համար, եւ, դժբախտաբար, մինչեւ օրս էլ այդ արտայայտութիւնը նստած է բազմաթիւ հայաստանցիների հոգեբանութեան մէջ:

Ամօթահար, չիմանալով ինչպէս արդարանալ իր արտասանած բառի համար, պարոնը սպասում էր իմ խօսքին: Բաւական հետաքրքրեց ինձ այդ մարդը՝ իր ընդգծուած հաշուենկատութեամբ, ուստի՝ որոշեցի առաջ գնալ ու փորձել էլ աւելի բացայայտել նրա՝ որպէս մարդու, ՀԱՅ մարդու կերպարը:

- Հիմա ի՞նչ, ավտոբուսո՞վ էք գնալու տուն,- երբ մոռացած տհաճ խօսակցութիւնը,- հարցրի:

- Այո-, ինչպէս միշտ,- հազիւ լսելի, նեղացկոտ ձայնով ասաց նա:

- Դէ լա՜ւ, լա՜ւ, քիթդ մի կախիր, այդպէս չի կարելի: Մոռացէք ամէն ինչ: Ես մեքենայով եմ, ի՞նչպէս կարող եմ ինձ թոյլ տալ, որ դուք ավտոբուսով գնաք, եկէք, եկէք միասին գնանք, ես իմ մեքենայով ձեզ տուն կը հասցնեմ: Առիթ էլ կ'ունենանք երկար զրուցելու:

Մի քիչ չեմ ու չում անելուց յետոյ պարոնը համաձայնուեց:

- Ամրակապիչը կապէք,- մեքենան շարժուելուց յետոյ ասացի պարոնին, տեսնելով, որ նա միտք չունի այն ամրացնել: Մեքենայի մէջ բացուեց իր «հետաքրքիր» եւ «ուսանելի» պատմութեան կծիկը: Պարոնը (անունը յարմար չեմ գտնում հրապարակել, նրա նմանները քիչ չեն մեզանում) իր պատմութիւնը սկսեց Երեւանից.

- Այնտեղ ես լաւ գործի տէր էի՝ որպէս խանութի վարիչ, քսան տարուայ ընթացքին հսկայական գումար էի կուտակել: Ինչի՞ս էր պէտք այդ գումարը, եթէ այն չէի կարող գործողութեան մէջ դնել: Մի խօսքով՝ մեռած կապիտալ- Որոշեցի իմ ամբողջ կարողութիւնը վերածել ոսկու եւ շատ թանկագին խալիներ (գորգեր) գնելուն: Եթէ յիշում էք, անցեալ դարի 60-ականներին բացուեց Պէյրութի ճամբան: Սա մի լաւ առիթ էր դրամս գործողութեան մէջ դնելու համար: Մի լիբանանահայ մեծահարուստի միջոցով եւ Երեւանի մաքսատան հետ համագործակցելով՝ կարողացայ իմ ողջ հարստութիւնը եղածի պէս տեղափոխել Պէյրութ, ուր ապրեցինք գրեթէ երկու տարի:

- Իսկ յետոյ ի՞նչ եղաւ, կարողացա՞ք հարստութիւնը տեղափոխել Ամերիկա,- ընդհատելով զրուցակցիս խօսքը,- հարցրի ես:

- Այո՛, բարեբախտաբար մի մեծ գումար կաշառք տալով, բարեկամներիս օգնութեամբ, 1976 թուականին մի գեներալ ամէնը հասցրեց Լոս Անճելես:

- Եւ, ի հարկէ, ամբողջ ունեցուածքը դրեցիք գործի մէջ,- համոզուած ասացի ես:

- Ո՛չ, այդպէս չէ: Անմիջապէս երկու տուն գնեցի նոյն հողամասի վրայ, քիչ յետոյ կը տեսնէք, մէկը՝ տղաներիս համար, իսկ միւսը՝ իմ եւ կնոջս: Այն տարիներին շատ էժան էին տները:

- Յետոյ, յետոյ՜, ի՞նչպէս դասաւորուեց ձեր կեանքը:

- Ես, ճիշդ է, շատ փող ու ոսկեղէն ունէի, բայց որոշեցի իմ կարողութիւնը ծառայեցնել իմ զաւակների բարձրագոյն ուսմանն ու մեր՝ իմ եւ կնոջս հանգստին: Ես բիզնէսի գլուխ չունեմ:

- Այդ ինչպէ՞ս, չէ՞ որ, ձեր ասած կարողութեամբ կարելի էր յաջող բիզնէսի դէպքում կրկնապատկել, գուցէ եւ տասնապատկել եղածը, ինչո՞ւ չմտածեցիք այդ մասին:

- Չէ՜, ախպեր ջան, բիզնեսն իմ բանը չի: Ես գոհ եմ իմ որոշման համար: Իմ մտածած ձեւով ես հասել եմ իմ նպատակին: Տղաներս բարձրագոյն կրթութիւն են ստացել, դոկտորական են պաշտպանել, ունեն իրենց սեփական գործը: Երկուսն էլ ամուսնացած են: Ունեմ թոռներ, էլ ի՞նչ է պէտք մարդուն:

- Այդ ամէնը լավ է, իհարկէ: Կա դրամ, տուն-տեղ, թոռներ: Հաւանաբար ձեր զբաղմունքն էլ ձեր թոռներն են, այո՞-

- Չէ՜, ի՞նչ էք ասում, հազարից մէկ ենք տեսնում մեր թոռներին, էն էլ՝ տօնից տօն:

- Ի՞նչպէս թէ տօնից տօն, ինչ է, նրանք Լոս Անջելեսում չե՞ն ապրում,- զարմացած հարցրի ես:

- Տղաներս իրենց տներն ունեն Բըրբանկի եւ Գլենդէլի սարերում: Մեծ տղաս հեռանալիս ասաց. «Հայրիկ, հերիք է տանջուէք մեզ համար: Հանգստացէք եւ ապրէք միայն ձեզ համար»: Իմ տանը կից միւս տունն էլ վարձով եմ տուել:

Խօսակցիս վերջին պարբերութիւնից յետոյ, որոշ ժամանակ երկուսս էլ լուռ էինք: Իւրաքանչիւրս իր մտքերի հետ: Լռութիւնը խախտեց բարեկամս.

- Հէն ա. հէն ա, հասնում ենք պարոն Անասեան, ահագին նեղութիւն տուի ձեզ:

- Ո՜չ, ի՞նչ էք ասում, ինձ համար հաճելի էր ձեզ հետ զրուցելը, այնուհանդերձ, կարելի՞ է մի հարց տալ, ինչպէ՞ս էք անցկացնում ձեր ժամանակը, կարդում էք՝ հասկացանք, իսկ հայկական երեկոների, համերգների, թատրոն, բա՞նգնո՞ւմ էք:

- Ճիշդը որ ասեմ, պարոն Անասեան, ոչ մի հայկական ձեռնարկի չենք եղել, սակայն ասել չի, որ տանն ենք նստում: Գրեթէ քառասուն տարի, ես ու կինս մշտապէս շրջագայութեան մէջ ենք: Շրջել ենք գրեթէ ողջ աշխարհը: Համարեայ երկիր չի մնացել, որ եղած չլինենք: Էլ՝ ծովով, օդանաւով, երկաթուղով: Միայն Մեքսիկոյում տասներկու անգամ ենք հանգստացել:

- Իսկ Հայաստան երբեւէ գնացե՞լ էք, չէ՞ որ քառասուն տարի է անցել ձեր հրաժեշտի օրուանից, դուք ձեր հայրենիքի անունը չտուիք-:

Այստեղ մի պահ լռջացաւ մեր պարոնը՝ մինչ այդ հռետորական բարձունքից իմ առջեւ փռելով աշխարհի քարտեզը:

- Ոչ-, չեմ գնացել,- մեղաւոր ժպիտով ասաց նա ու աւելացրեց,- մենք ոչ ոք չունենք այնտեղ, գնամ ի՞նչ անեմ-

Սա արդէն չափից դուրս էր: Հազիւ զսպելով ինձ, որպէսզի չբղաւեմ՝ ասացի.

- Բա հայրենիքը, Երեւանը, քո ծննդավայրը, քո հողը-, բա դրանք ոչինչ չ'արժե՞ն-, չէ՞ որ դրանց շնորհիւ, այնտեղ ապրող մարդկանց, այդ թւում նաեւ՝ ԱԽՊԱՐՆԵՐԻՑ շորթած դրամներով ես միլիոններ դիզել, ու նրանց բարեկամների օգնութեամբ էլ դրանք հասել են Ամերիկա:

Ոչ մի խօսք, ոչ մի պատասխան: Արդէն տեղ ենք հասել: Պարոնը ձեռքը գցել է բռնակին ու առանց հրաժեշտ տալու, փորձում է իջնել մեքենայից, իսկ ես, հեռացնում եմ նրա ձեռքը բռնակից ու ինքս եմ բաց անում դուռը եւ համարեայ բղաւելով, աչքերս մեխելով նրա աչքերի մէջ՝ հարցնում եմ.

- Իսկ Լիբանանի եւ Սուրիայի քո սովեալ հայրենակիցներին, քո իսկ բառապաշարով՝ Ախպարներին դրամ ուղարկո՞ւմ ես-

Մարդուկը լո՜ւռ, առանց մի բառ ասելու, իջնում է մեքենայից ու քայլերն ուղղում դէպի իր՝ ապարանք յիշեցնող բնակատեղին:

www.massisweekly.com

# ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

**ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՈՆ**

**Yes, I wish to subscribe to Massis Weekly**

**Enclosed a check for (one year)**

*** $50,00 * $100,00 (first class) for USA**

**$ 125,00 (Air Mail) for Canada.**

**$ 250,00 (Air Mail) Overseas.**

Name: -------- ---------------------------------

Address: ----------------------------------------

City: --------- State:--------- Zip Code:------

Country: -------------

Tel :------------------------

Email: -------------------------

# Հայաստանի Մշակութային Կեանք
# Չարլզ Դիքենսի »Մեր Տիրոջ Կեանքը« Գրքի Շնորհանդէսի Եւ Մայիս Մխիթարեանի Նկարներու Ցուցահանդէսի Առիթով

ԱՇՈՏ ՎԱՒԵԱՆ




*Անգլիացի մեծանուն գրող Չարլզ Դիքենսը նուիրեալ քրիստոնեայ էր եւ իր բովանդակ կեանքում պայքարել էր մարդասիրական գաղափարների իրագործման համար: Նրա աշխատութիւններից մէկը՝ «Մեր Տիրոջ կեանքը» Յիսուս Քրիստոսի կեանքի մասին գեղեցիկ շարադրուած աւետարանական պատմութիւններ են՝ գրուած սեփական երեխաների համար: Աշխատութիւնը նախատեսուած չի եղել հրապարակման համար, ընթերցուել է հեղինակի տանը, եւ միայն գրողի ու նրա զաւակների մահից յետոյ է հնարաւոր դարձել այն տպագրել եւ հասանելի դարձնել ընթերցողներին:*

*Ի ուրախութիւն բոլորիս, այս գործը մատչելի դարձաւ նաեւ հայ ընթերցողին:*

*Վերջերս Հայաստանի նկարիչների միութիւնում տեղի ունեցաւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Արագածոտնի թեմի նախաձեռնութեամբ հայերէն թարգմանուած «Մեր Տիրոջ կեանքը» գրքի շնորհանդէսը: Յաջողութեամբ թարգմանուած գեղարուեստական հանճարեղ այս ստեղծագործութիւնը ցանկացած տարիքի ընթերցողին կարող է օգնել առաւել խորութեամբ ընկալել աւետարանական իրադարձութիւնները, մօտ գտնուել սիրոյ ու մարդասիրութեան սկզբունքների վրայ հիմնուած քրիստոնէական արժէհամակարգին եւ դրանով իսկ նպաստել առողջ հասարակութեան կայացման շնորհակալ գործին: Եւ ինչպէս գրքի թարգմանիչ Կարէն Գէորգեանն է իր ներածական խօսքում յոյս յայտնում, գիրքը Հայաստանում իր նպաստն է բերելու աշխարհն աւելի բարի դարձնելու Չարլզ Դիքենսի գործադրած ջանքերին:*

*Գրքի շնորհանդէսին ներկայ էին ճանաչուած մշակութային ու հասարակական գործիչներ, օտարերկրեայ դիւանագէտներ ու բազմաթիւ այլ հիւրեր, որոնցից շատերը ելոյթ ունեցան արտայայտելով իրենց գնահատանքի խօսքը:*

*Շնորհանդէսից յետոյ, իբրեւ դրա շարունակութիւն նկարիչների միութեան ընդարձակ դահլիճում բացուեց գրքի նկարազարդման համար օգտագործուած յայտնի գեղանկարիչ Մայիս Մխիթարեանի աշխատանքների ցուցահանդէսը, եւ ահա, ամբողջ դահլիճը ողողւում է արուեստագէտի իւրայատուկ ստեղծագործական ոճին բնորոշ վառ գոյներով:*

*Ահա՝ Հին Կտակարանից Շուշանն է ծնկաչոք, զրպարտող ծերերի միջեւ, բայց երկնքում հրեշտակներն են ճախրում, որպէսզի Դանիէլի միջոցով յաղթանակի արդարութիւնը: Կողքի կտաւում Ռաֆայէլ հրեշտակն է պահապան, ում առջեւ՝ Տոբիթն է որդու հետ՝ ոսկիները նրանց ոտքերի առջեւ շաղ տրուած: Ահա, Գաբրիէլ հրեշտակն է այցելել Մարիամ Աստուածածնին՝ Փրկչի ծննդեան լուրը նրան հաղորդելու: Մէկ այլ նկարում՝ Տիրոջ ուղարկած երկնային հրեշտակների զօրքն է այցելել վախուորած հովիւներին՝ Փրկչի ծննդեան աւետիսը նրանց փոխանցելու: Իսկ այս կտաւում նորածին Յիսուսն է, աղօթող Աստուածածնի եւ խանձարուրը բռնած մի հրեշտակի հետ: Յաջորդում՝ Սուրբ Յովհաննէս Մկրտիչն է եւ Յիսուսը՝ գլխավերեւում աղաւնին՝ իբրեւ սուրբ հոգով մկրտութեան խորհրդանիշ: Այս մէկում էլ՝ Մովսէսի ու Եղիայի ներկայութեամբ դարձեալ մեր Տէրն է լոյսերի մէջ պայծառակերպուած, եւ իր երեք աշակերտներն են սարսափած՝ ձեռքները լոյսին ընդդէմ պարզած: Միւսում՝ Յիսուսի աշակերտներն են զարմացած ու մերժող կեցուածքով նայում նրան, ով լուանում է նրանց ոտքերը Խորհրդաւոր Ընթրիքից մէկ օր առաջ: Յաջորդում՝ հրեշտակներն են հսկում, թէ ինչպէս է Տէրն իր Երկրորդ Գալստեանը լոյսերի միջից իջնում: Իսկ այս պատկերում էլ Յիսուս Քրիստոսն է օրհնում երեխաներին, որոնց ձեռքերում հաւատքի ուժը խորհրդանշող մանանեխի հատիկներ են...:*

*Եւ աստուածաշնչական այս կերպարները ստեղծում են մի տրամադրութիւն, որը քեզ ստիպում է մոռանալ մարդկանց ներկայութիւնը, մոռանալ ինքդ քեզ, եւ հոգեպէս տեղափոխուել կտաւների շրջանակներից ներս, որտեղ յաւերժութիւնն է: Իսկապէս, որ տպաւորիչ է այս ամէնը՝ անգլիացի հանճարի գրքի հայերէն թարգմանութեան շնորհանդէսն ու տաղանդաւոր արուեստագէտի գեղանկարների ցուցահանդէսը, ինչը երկար պիտի յիշուի Հայաստանի մշակութային կեանքում:*

*Գրքի թարգմանութիւնն ու տպագրութիւնը, շնորհանդէսի եւ ցուցահանդէսի կազմակերպումն իրագործուել են Մովսիսեան ընտանիքի հովանաւորութեամբ: Գրիգոր Մովսիսեանը քաջածանօթ է հանրութեանը մեր երկրի հոգեւոր կեանքին իր մասնակցութեամբ. նա հեղինակել է «Վահագնի ծնունդը կամ մեր Տէր Յիսուս Քրիստոսի երկրորդ գալուստը» գիրքը, հրատարակել երջանկայիշատակ Գարեգին Առաջին Ամենայն Հայոց կաթողիկոսի հայաստանեան անտիպ քարոզների երկհատորեակը, հովանաւորել է այլ հեղինակների հոգեւոր աշխատութիւնների տպագրութիւններ, մեծապէս աջակցել է Արցախի Մեխակաւան բնակավայրում Զօրաւոր Սուրբ Աստուածածին եկեղեցու կառուցմանը, իրականացրել է Աշտարակի Սուրբ Մարիանէ եկեղեցու վերակառուցման եւ ընդլայնման աշխատանքները...: Թող որ Աստծու օրհնութեամբ շարունակուեն նրա բարի գործերը:*

*-Արդէն ուշ երեկոյ էր, սակայն մարդիկ կարծես թէ չէին շտապում հեռանալ նկարիչների միութեան դահլիճից եւ խումբ-խումբ կանգնած զրուցում էին, կիսւում գրքի ու գեղանկարների տպաւորութիւններով: Ոմանք պայմանաւորւում էին սրճել դրսում՝ շարունակելու անաւարտ զրոյցը, ոմանք էլ զրուցակիցներին հրաւիրում էին իրենց տուն: Հիմա նրանք բոլորովին այլ էին, քան մի երեք-չորս ժամ առաջ, այժմ նրանք մի տեսակ սրտաբաց էին, մարդամօտ, հոգեպէս՝ ուրախ: Չէ որ այդ օրն իսկակա՛ն մշակոյթի տօն էր՝ այն էլ աստուածայինի մասնակցութեամբ:*

*«Մշակոյթը հոգու յաղթանակն է նիւթի նկատմամբ: Մշակոյթն անմահութիւնն է՝ մեր երկրաւոր կեանքի մէջ թափանցող: Մշակոյթը երկրաւոր մարդկանց հոգիացնողն է:», կարծես թէ, ճիշտ այս առիթով է ասել երջանկայիշատակ Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը:*


Միջոցառմանը՝ մշակոյթի գործիչների հետ

# Հասնինք Լիբանանի Մեր Քոյրերուն Եւ Եղբայրներուն

«Զախորդ օրերը ձմրան նման կու գան ու կ'երթան,
Վհատելու չենք, վերջ կ?ունենան կու գան ու կ'երթան»:

Ճիւանի

ԽԱՉԻԿ ՃԱՆՈՅԵԱՆ

*Սփիւռքահայութեան փափախուն սիրտը հանդիսացող լիբանանահայութիւնը անգամ մը եւս բազմաթիւ դժուարութիւններով ու մանաւանդ տնտեսական տագնապալի օրերով լեցուն վիճակի մէջ է:*

*Քառասուն տարիներու քաղաքական, տնտեսական եղբայրասպանութեան ցաւալի օրերէ ետք, հազիւ ինքզինք շտկած էր եւ կեանքը բնական հունի մէջ մտնելու վրայ էր, երբ Օգոստոս 4, 2020-ին տեղի ունեցաւ Պէյրութի նաւահանգիստի մահասփիւռ պայթումները, ուր 200-է աւելի հոգիներ մահացան, 5000-է աւելի վիրաւորուեցան եւ մօտ երեք հարիւր հազար հոգի անտուն եւ աներդիկ մնացին:*

*Այդ սարսափելի դէպքէն իվեր, Լիբանանի ազնիւ ժողովուրդը կը տուայտի: Քաղաքական, տնտեսական պսակաձեւ ժահրի թոհուբոհին մէջ: Անգործութիւնը համատարած է, կեանքի սղաճը գլուխ առած անցած է: Մօտ տարիէ մը իվեր Լիբանանի մէջ կառավարութիւն չէ կազմուած, անգլուխ մարմին մը եղած է, Միջին Արեւելքի Փարիզը հանդիսացող այս դրախտավայր երկիրը:*



*Լիբանանի հայ համայնքն ալ ոչ միայն Սփիւռքի կարեւոր գաղութներէն է, այլ այս գաղութը Սփիւռքի համար հայթայթած է մտաւորականներ, կրթական մշակներ, քաղաքական ու մանաւանդ կղերականներու մեծ թիւ մը: Այսօր այդ համանքն ալ հազար ու մէկ դժուարութիւններու առաջ կը գտնուի:*

*Հայերը ողջ պատմութեան ընթացքին բազմաթիւ աղէտներ տեսած եւ անցած են: Այս բոլորը կրցած է ընել իր զաւակներուն կամքով, յոյսով եւ հաւատքով: Կրցած է դիմագրաւել զանոնք միշտ օգնութեան ձեռք երկարելով աղէտահար գաղութներուն կամ՝ Հայրենիքի եւ Արցախի հայութեան:*

*«Մարմնի անդամի մը ցաւը, ողջ մարմնին ցաւ կը պատճառէ»:*

*Սիրելի հայրենակիցներ, Լիբանանի մեր քոյրերուն եւ եղբայրներուն ցաւը, ողջ հայութեան ցաւն է, ճիշտ ասոր համար է, որ սրտագին կոչ կ'ընենք Ամերիկայի Միացեալ Նահանգներու մեր կազմակերպութեանց, մեր հոգեւոր բարեսիրական եւ աշխարհիկ հաստատութեանց, որ գործի անցնին եւ իրենց նիւթական եւ բարոյական օժանդակութիւնը հասցնենք Լի-*

Շար.ը էջ 15

# Սիաթըլի Սուրբ Յարութիւն Եկեղեցի Ամառային Ճամբար



Այս տարի Սիաթըլի Սուրբ Յարութիւն Եկեղեցին կազմակերպել էր ամառային երկշաբաթեայ ճամբար: Այն սկսուեց Յուլիս 6-ին եւ աւարտուեց Յուլիս 16-ին: Ճամբարի կազմակերպումն առաջին փորձն էր, որին մասնակցեցին շուրջ 45 երեխայ: Հոգեւոր Հովիւի, կազմակերպիչների եւ քսանից աւելի կամաւորների կողմից պատրաստուած բազմակողմանի ծրագրի շնորհիւ կեանքի կոչուեց այս ճամբարը, որը երեխաների ամառային արձակուրդը դարձրեց առաւել յագեցած ու յիշարժան: Ցիրաւի, արուել էր իրենց շրջապատող բնութիւնը:

Պարուսոյց Ստելա Միրզոյեանի դասերին երեխաները բացայայտեցին Հայ ազգագրական պարերը: Նրանք մեծ խանդավառութեամբ կրկնօրինակում էին ուսուցչուհուն, որը պարի միջոցով «պատմում էր» մեր ժողովրդի անցած ճանապարհի, հաւատի ու անկոտրում կամքի մասին:

Սուրբ Յարութիւն ճամբարի առաքելութիւններից մէկն էլ երեխաներին շրջակայ միջավայրի հետ հաղորդակից դարձնելն էր՝ նրանց մէջ սերմանելով սիրոյ եւ խնամքի



ամէն ինչ, որպէսզի երեխաները լիարժէք վայելեն իրենց ճամբարական բացառիկ օրերը. հոգեւոր զրոյցներ, երգ, պար, նկարչութիւն սպորտային եւ հետաքրքրական խաղեր, տարբեր մրցոյթներ:

Երեխաները մեծ սիրով եւ հետաքրքրութեամբ էին ունկնդրում Եկեղեցու հոգեւոր հովիւ Արժ. Տէր Վազգէն քհնյ. Պօյաճեանի ամէնօրեայ հոգեւոր պատգամները եւ զրոյցները, որոնք վերածւում էին երկխօսութեան, առիթ տալիս զանազան քննարկումների:

Սուրբ Յարութիւն եկեղեցու ճամբարի յաջողութեան համար պարտական ենք նաեւ համայնքիս մի խումբ արուեստագէտներին, որոնք իրենց իւրայատուկ տաղանդով երեխաներին տեղափոխեցին արուեստի կախարդական աշխարհ: Նրանք երգի, պարի եւ նկարչութեան դասընթացքների միջոցով փորձեցին ճամբարականներին ծանօթացնել նաեւ հայկական մշակոյթի հետ: Երեխաները սիրով սովորեցին երգի ուսուցչուհի Լենա Ասլանեանի կողմից մատուցած մանկական երգերը:

Նկարիչ-քանդակագործ Գեղամ Աբրամեանի դասընթացները գծի եւ գոյնի, ծաւալի եւ ներդաշնակութեան բացայայտումներով արտայայտում էին նկարչութեան գաղտնիքները, որոնցով ներշնչուած մանուկները պատկերում էին զգացողութիւն՝ հանդէպ Աստուծոյ պարգեւ բնութիւնը, որին անտարբեր լինելը աղէտ է ողջ մարդկութեան համար:

Ճամբարային եւ սպորտային խաղերը լուրջ մրցակցութեան եւ հաճելի պահեր էին պարգեւում մասնակիցներին: Խաղերի կազմակերպիչ Գրիգոր Յակոբեանի անաչառ մրցավարութեան եւ նրբանկատութեան շնորհիւ իւրաքանչիւրն արժանանում էր խրախուսանքի:

Անգնահատելի է նաեւ Սելինէ Յակոբեանի ստեղծագործական մօտեցումը երեխաներին. նրա կատարած թարգմանական աշխատանքի շնորհիւ ընթերցուեցին հայկական բանաստեղծութիւններ՝ հայրենիքից հեռու ապրող փոքրիկներին փոխանցելով հայկական ոգին եւ շունչը:

Ճամբարի վերջին օրը լի էր յիշարժան պահերով: Տէր հօր օրհնութիւնից եւ հրաժեշտի խօսքերից յետոյ, երեխաներն իրենց ծնողների հետ վայելեցին Տիկնանց յանձնախմբի պատրաստած հիւրասիրութիւնը, ապա տեղի ունեցաւ խարույկահանդէս, որն ուրախ երգերի ուղեկցութեամբ եւ բոլորին սիրելի Մաշ մելոյի ճաշակմամբ իր շուրջը համախմբեց բոլոր ճամբարականներին:

Ուզում ենք մեր երախտագի-

Շար.ը էջ 15

# ԱՄՆ Արեւմտեան Թեմը Հայ Ընթերցողի Սեղանին Կը Դնէ Եօթն Անուն Նոր Գրքեր







Սիրելի ընթերցող, ուրախութեամբ կու զանք տեղեակ պահելու, որ Թեմիս Բարեխնամ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի օրհնութեամբ՝ արդէն հրատարակուած եւ ընթերցանութեան համար հասանելի դարձած են Արեւմտեան Թեմի 2021 Թուականին համար նախատեսուած եօթն անուն գրքերը, որոնց մասին անցեալին յայտնած էինք: Յիշեալ նոր հրատարակութիւնները իրենց բովանդակութեանց մէջ կը ներառեն հոգեւոր, քարոզխօսական, եկեղեցական եւ պատմական զանազան նիւթեր ու աշխատութիւններ՝ հայերէն եւ անգլերէն լեզուներով:

Ստորեւ կը ներկայացնենք նոր հրատարակուած գրքերու ցանկն՝ հակիրճ նկարագրութեամբ.

1. Յովնան Արք. Տէրտէրեան - Փունջ մը քարոզներ, հատոր ԺԶ:

Այն կը պարունակէ Սրբազան Հօր 2020թ.-ի ընթացքին գրի առնուած քարոզները եւ խորհրդածութիւնները: Դրանք կը վերաբերին հոգեւոր կեանքին, դէպի Աստուած մարդ անհատի ընթացքին, Մայր հայրենիքին, մարդկային տագնապներուն, սիրոյ, միասնականութեան ինչպէս նաեւ բազմաթիւ այլ թեմաներուն:

2. Archbishop Hovnan Derderian - Walking Out of the Upper Room ( Volume II). Յովնան Արք.-ի բլոգների ժողովածուն է անգլերէն լեզուով, որը կազմուած համավարակի շաբաթներուն ու ամիսներուն գրուած խորհրդածութիւններէ, վերլուծումներէ ու հակիրճ ձեւակերպումներէ: Առաջին հատորեակը հրատարակուած է 2020-ին:

3. Archbishop Hovnan Derderian - Spiritual Reflections. Առաջնորդ Սրբազան Հօր վերջին երկու տարիներու ընթացքին տարբեր ձեռնարկներու եւ միջոցառումներու ժամանակ անգլերէն լեզուով արտասանած՝ ելոյթներու եւ հրապարակային խօսքերու ժողովածուն է:

4. Յովհան Ոսկեբերան - Ապաշխարութեան պտուղներ (Քարոզներ եւ ճառեր): Համաքրիստոնէական սուրբ հեղինակի քարոզներու ու ճառերու գրաբարէն աշխարհաբար թարգմանութիւններն են: Այն 1-ին հատորն է Արեւմտեան Թեմի Ոսկեղենիկ մատենաշարի (Նախաձեռնող՝ բանասիրական գիտ. թեկնածու, դոցենտ Նորայր Պօղոսեան), եւ պահանջարկը հաշուի առնելով՝ յանձնուած է վերահրատարակութեան:

5. Կարապետ Արք. Պալատեցի - Տարեկան Քարոզգիրք (ընտրանի): 4-րդ հատորն է Ոսկեղենիկ մատենաշարի: Արեւմտեան Թեմի Առաջնորդարանէն ներս պահպանուող ձեռագրի հիման վրայ գրաբարէն աշխարհաբարի են փոխադրուած (Նորայր Պօղոսեան, Գէորգ Սրկ. Կարապետեան) Կ. Պոլսոյ Պատրիարք 1823-31 թթ. Կարապետ Արք. Պալատեցիի քարոզներէ ընտրուած հատուածներ:

6. Մաղաքիա Արք. Օրմանեան Պատմութեան Դիտանկիւնէն: Ժողովածուն նուիրուած է Օրմանեան Պատրիարքի մահուան 100-ամեակին, այն բաղկացած է չորս յօդուածներէ, որոնք կը ներկայացնեն անոր կեանքն ու եկեղեցական բեղուն գործունէութիւնը: Ժողովածուի նիւթերը առնուած են 18 փետրուար, 2019-ին Արեւմտեան Թեմէն ներս տեղի ունեցած «Հայ Եկեղեցւոյ 20-րդ դարու Ականաւոր Հոգեւորականները» գիտաժողովէն:

7. Archbishop Hovnan Derderian - The Book Corner: Այս գեղեցիկ հատորեակին միջոցաւ Գերաշնորհ Տ. Յովնան Արք. Տէրտէրեանը ընթերցողներուն կը փոխանցէ համաշխարհային ճանաչում ունեցող եկեղեցական մեծագոյն հեղինակներու եւ գործիչներու մտքերու վերլուծութիւններ, անոնց հետ կապուած յուշեր եւ մտորումներ անգլերէն լեզուով:

Տպագրութեան ընթացքի մէջ են Հոգշ. Տ. Տաճատ Ծ. Վրդ. Եարտըմեանի «Վանական հոգեկանութիւնը Քրիստոնէութեան առաջին Դարերուն» աշխատութիւնը եւ Գրիգոր Նարեկացու «Մատեանի» աշխարհաբար փոխադրութեան ընտրանին, ինչպէս նաեւ այլ աշխատութիւններ, որոնց վերաբերեալ յառաջիկային կը տեղեկացնենք:

Սիրելի ընթերցող, վերոնշեալ այս եւ միւս բոլոր գրքերը կարող էք փնտրել եւ թուային տարբերակով գտնել Արեւմտեան Թեմի կայքէջին վրայ եւ ընթերցել:

Դիւան Առաջնորդարանի

www.massispost.com

## Անվերադարձ Բաժնուեցաւ Յակոբ Ատալեան



*Մեծ է ցաւը Ատալեան ընտանիքին եւ խորունկ է վիշտը բոլոր անոնց որոնք մօտէն կը ճանչնային պատուական հայորդի Յակոբ Ատալեանը: Ան մեզմէ հեռացաւ Յուլիսի 22ին, 2021 առաւօտուն, յետ երկարատեւ հիւանդութեան, խոր սուգի մատնելով իր հարազատներն ու բարեկամական լայն շրջանակը: Յատկապէս «Շիրակաշէն»ի խմբակցութեան անդամները, որոնց երկարատեւ սիրելի նախագահն էր ան: Դժբախտաբար չի կրցաւ գոնէ սիրելիներով շրջապատուած հրաժեշտ տալ կեանքին որուն այնքան կառչած էր:*

*Յակոբ Ատալեան ծնած է 15 Մարտ, 1933ին, իր ծնողները՝ Ստեփան եւ Վարդուհի բնիկ պուրսացի էին եւ մեծ եղեռնէն վերապրողներ: Նախնական ուսումը Հալէպ ստանալէ ետք ընտանեօք կը փոխադրուին Պէյրութ: Ան կեանքի պայմաններու բերումով՝ կը սկսի աշխատիլ Ուզունեան զգեստեղէնի հաստատութեան մէջ:*

*Այստեղ կը ծանօթանայ իր կեանքի ապագայ ընկերուհիին «Միմի»ին (Միրէյ Մերճանեանի) հետ եւ 1958ին ամուսնանալով կը կազմեն ընտանեկան երջանիկ բոյն մը:*

*Կը բախտաւորուին երկու զաւակներով՝ Թանիա եւ Զարեհ: Անոնք եւս ամուսնանալով կը բախտաւորուին երեք թոռներով՝ Ուիլիըմ, Սէլիա եւ Ճորճ:*

*1976ի Լիբանանի քաղաքացիական պատերազմին պատճառով, Ատալեանները կը փոխադրուին Փարիզ: Այստեղ որպէս արհեստավարժ պաշտօնեայ Յակոբ կ՚ընդունուի Շան Ջելիզէի նշանաւոր «Սէլիօ» հագուստեղէնի հաստատութեան մէջ, որպէս բաժնի վարիչ: Հանգուցեալը զայն կը կատարէ մեծ ձեռնհասութեամբ ու նուիրումով:*

*Այնուհետեւ կը նշանակուի այդ հաստատութեան տնօրէն եւ հոն կը գործէ շուրջ 25 տարի:*

*Յակոբ Ատալեան հանգստեան կոչուելէ ետք, կը փոխադրուի Ամերիկայի Միացեալ Նահանգներ, նախընտրելով բնակիլ Լոս Անճելոս, իր մերձաւորներուն մօտ:*

*Իր նախասիրութիւններէն մաս կազմած է զբօսաշրջութիւնը ու ընթերցանութիւնը: Շրջած է տարբեր ցամաքամասերու տասնեակ մը երկիրներ, ծանօթանալու անոնց յուշարձաններուն, ընկերային կեանքին եւ տեսարժան վայրերուն:*

*Լոս Անճելոսի մէջ ան հեռու չի մնար հայ համայնքէն: Շուտով կը միանայ «Շիրակաշէն» խմբակցութեան: Հոն կը հետեւի հայ մտաւորականներու շաբաթօրեայ հանդիպումներուն եւ յարատեւօրէն գործնական մասնակցութիւն կ՚ունենայ: Հանգուցեալը վերջին տասնամեակին, մեծ հեղինակութեամբ կը վարէր «Շիրակաշէն»ի ատենապետութիւնը, միշտ վայելելով անդամներուն եւ համակիրներուն անվերապահ սէրն ու համակրանքը:*

*Յակոբ Ատալեան միաժամանակ ատենապետն էր Սան Ֆերնանտօ Հովիտի Ջեսթուըրթ քաղաքի «Հայ Տուն»ի վարչութեան: Ան մեծ ներդրում ունեցաւ այս կազմակերպութեան գոյատեւման եւ յառաջդիմութեան մէջ, միշտ մնալով պատնէշին վրայ, շրջապատին օգտակար հանդիսանալու լաւագոյն տրամադրութիւններով:*

*Հանգուցեալի առօրեայ հետաքրքրութեանց եւ մտահոգութեան մաս կը կազմէին նախ իր ընտանիքը, յատկապէս իր կինը՝ «Միմի»ն, որուն հանդէպ մեծ սէր եւ գուրգուրանք ունէր եւ ապա հայրենիքի եւ սփիւռքի հայութեան կեանքն ու դիմագրաւած դժուարութիւնները: Համացանցի վրայ ամէն առաւօտ կը հետեւէր հայ մամուլի հաղորդումներուն եւ վերջին իրադարձութիւններուն: Հաւատաւոր ընթերցող մըն էր նաեւ «Մասիս»ի:*

*Յակոբ Ատալեան ինքնուրոյն անձնաւորութիւն մըն էր, եւ հաճելի զրուցակից մը: Փոքր համայնագիտարան մը, այլազան նիւթեր ընդգրկող: Կեանքի փորձառութիւններով հարստացած իմաստուն խորհրդատու մըն էր: Իսկ ընկերային շրջանակներու մէջ հաճելի զուարթախօս մը: Իր դիպուկ կատակներով ջերմ մթնոլորտ ստեղծող մըն էր: Ընդհանրապէս իր զրոյցները՝ «համով հոտով» էին...: Շատեր օգտուեցան իր ինքնուրոյն խօսքերէն:*

*Յաւերժի ճամբորդ Յակոբի նշանաբաններէն մին էր. «Առողջ տրամաբանութիւն, դիտելու աշխարհը ու ամէն ինչ դիմաւորել լաւատեսութեամբ...«:*

*Հանգիստ իր բազմատառապ աճիւններուն:*

---

## Սիաթըլի Սուրբ Յարութիւն Եկեղեցի

Շարունակուած էջ 14-էն

*տութիւնը յայտնել ճամբարի պատասխանատու Աննա Յակոբեանին, որի բծախնդիր եւ հետեւողական աշխատանքի մասին նշեց նաեւ եկեղեցու Ծխական Խորհրդի ատենապետ Լեւոն Սարկաւագ Խսիբովը, երեխաները եւ բոլոր ծնողները: Մեր երախտագիտութիւնն ենք յայտնում բոլոր կամաւորներին՝ Աննա Եղիազարովին, Արմինէ Խաչատրեանին, Նայիրա Յարութիւնեանին, Ռիթա Տօքմէքչեանին, Նինա Նիկողոսեանին, Էլինէ Ղալամքարեանին, Ծովինար Մուրադեանին, Ինգա Եղիազարեանին Աժելինա Պրոշիկեանին, Ռիթա Թորչինսկուն, Քեյթ Առուստամեանին եւ Նելի Անտոնեանին:*

*Յատուկ շնորհակալութիւն Ոսկանեան եւ Իսրայէլեան ընտանիքներին, որոնք, իբրեւ հայ եկեղեցու արժանաւոր զաւակներ, իրենց օգնութեան ձեռքը մեկնեցին եւ յանձնառու եղան երկօրեայ ճաշի սպասարկութիւնը:*

*Աստուած օրհնի եւ բարի ամառ բոլորին:*

*Եկեղեցւոյ Մամլոյ Դիւան*

---

### ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ





*ԱՆԱՀԻՏ ՄՈՒԹԱՖԵԱՆ-ՊԷՐՊԷՐԵԱՆի մահուան առաջին եւ ՅՈՎՍԷՓ ՄՈՒԹԱՖԵԱՆի երկրորդ տարելիցներուն առիթներով յաւարտ Ս. Պատարագի հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, Օգոստոս 1, 2021, Փասատինայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Հայց. Առաքելական եկեղեցւոյ մէջ, 2215 E. Colorado Blvd.:*

*Խնդրողներ՝*

*Տիկ. Ազնիւ Մութաֆեան եւ զաւակը Մինաս*

*Տիկ. Լիսա Մութաֆեան եւ զաւակները՝ Ժոզէֆ եւ Լիանա*

*եւ համայն Պէրպէրեան, Մութաֆեան, Արապաճեան, Գրգոչեան, Տէօշողլեան եւ Ժամկոչեան ընտանիքներ:*

---

### ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ԿԱՐՊԻՍ ՕՀԱՆԵԱՆի մահուան տխուր առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութիւնն ու անդամները իրենց խորազգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի այրիին, զաւակներուն եւ համայն ընտանիքի անդամներուն, մասնաւորաբար եղբօր՝ Տէր եւ Տիկ. Յարութիւն եւ Սոնա Օհանեանին:*

---

### ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

*ՅԱԿՈԲ ԱՏԱԼԵԱՆի մահուան տխուր առիթով «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնը իր խորազգաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի այրիին՝ Միմիին, զաւակներուն եւ համայն մերձաւորներուն, մասնաւորաբար՝ «Շիրակաշէն» խմբակցութեան անդամներուն:*

*Առ այդ «Շիրակաշէն»ի խմբակցութիւնը $200 կը նուիրէ «Մասիս» շաբաթաթերթին:*

---

## Հասնինք Լիբանանի Մեր Քոյրերուն

Շարունակուած էջ 13-էն

*բանանի մեր քոյրերուն եւ եղբայրներուն:*

*Մեր համեստ առաջարկն է, որ օր առաջ կեանք առնէ լիբանանահայութեան օգնութեան համահայկական միացեալ մարմին մը, որպէսզի ԱՄՆ-ի հայութիւնը միասնական ճիգերով եւ ղեկավարութեամբ այս գործը յառաջ տանի:*

*Խորապէս գիտակից ենք, թէ ԱՄՆ-ի հայութիւնը երկրի տնտեսական եւ պսակաձեւ ժահրի պատճառած դժուարութիւններով տնտեսական ծանր օրեր կ՚ապրի: Այսուհանդերձ, միշտ Աստուծոյ փառք տալով, կարեւոր է, որ Լիբանանի մեր քոյրերուն եւ եղբայրներուն օգնելու քաղցր պարտաւորութիւն կատարենք, մեծատունը իր գանձով, համեստ աշխատողը իր լումայով, բայց՝ բոլորս ալ սրտով եւ հոգիով սատար եւ օգնութեան ձեռք երկարել տառապահար մեր լիբանանահայութեան, այս պարագային հասնինք Լիբանանի մեր հայութեան, դպրոցներուն, մամուլին եւ մեր հոգեւոր տուներուն, որոնք այդ գաղութի գոյութեան իմաստն ու հիմնաքարերն են, մինչ այդ Լիբանանի մեր պատուական գաղութին կը մաղթենք ամէն բարիք, վերադառնալու համար իրեն անցեալի փառքին ու շէն ու շէնշող հմայքին:*

---

**ՎԱՐՁՈՒ ՍՐԱՀ**

**ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ՀՈԳԻԻ ՀԱՄԱՐ)**

**ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՀԱՄԱՐ**

**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**

**(626) 797-7680**

Ձեր Ծանուցումները Վստահեցէք

«Մասիս» Շաբաթաթերթին

Massis2@earthlink.net (626) 797-7680

## Հայաստանի Պատուիրակութիւնը Մասնակցեցաւ Թոքիօ-2020-Ի Բացման Արարողութեան



*Ճաբոնի մայրաքաղաք Թոքիոյի մէջ մեկնարկած է 32-րդ ամառային Ողիմպիական խաղերու բացման հանդիսաւոր արարողութիւնը, որ քորոնա ժահրի համավարակով պայմանաւորուած սահմանափակումներու պատճառով տեղի կ'ունենայ Յուլիս 23-ին՝ առանց հանդիսականներու:*

*Թոքիոյի Ողիմպիական մարզադաշտին մէջ ընթացող շքերթին մասնակցեցաւ նաեւ Հայաստանի պատուիրակութիւնը: Հայաստանի դրօշակակիրներն էին լողորդ Վարսենիկ Մանուչարեանը եւ բռնցքամարտիկ Յովհաննէս Բաչկովը (63 կգ): Հայաստանը 12-րդը դուրս եկաւ շքերթի, որուն կը մասնակցին 206 պատուիրակութիւններ:*

*Ներկայ էր նաեւ ՀՀ նախագահ Արմէն Սարգսեանը: Քորոնա ժահրային սահմանափակումներու պատճառով պատուիրակութիւնները ամբողջական կազմով չեն մասնակցած շքերթին:*

*Համաշխարհային առաջնորդներէն արարողութեան ներկայ է միայն Ֆրանսայի նախագահ Էմանուել Մաքրոնը:*

*Յիշեցնենք, որ քորոնա ժահրի պատճառով Թոքիօ-2020 Ողիմպիական խաղերը յետաձգուած էին մէկ տարիով եւ տեղի կ'ունենան 2021Թ. Յուլիսի 23-էն Օգոստոսի 8-ը:*

## 13-Ամեայ Մարզուհին՝ Ողիմպիական Ախոյեան



*Ճապոնի մայրաքաղաք Թոքիոյի մէջ շարունակուող 32-րդ ամառային Ողիմպիական խաղերու կանանց փողոցային սահնատախտակի ախոյեանի կոչումը նուաճած է 13-ամեայ ճաբոնուհի Մոմիջի Նիշիյան: Եզրափակիչին ան արձանագրած է 14.74 արդիւնք:*

*Արծաթէ մետալը բաժին հասած է 13-ամեայ պրազիլուհի Ռայսա Լեալին (14.64), իսկ պրոնզէ մետալակիր դարձած է 16-ամեայ ճաբոնուհի Ֆունա Նակայաման (14.49):*

*Մոմիջի Նիշիյան պատմութեան առաջին ողիմպիական ախոյեանն է կանանց սահնատախտակի:*

*Այս մրցաձեւի մետալակիրներու պատուոյ հարթակն ամենաերիտասարդն էր Ողիմպիական խաղերու պատմութեան մէջ:*

## Ոսկէ Գաւաթի Մրցաշարքին Ամերիկա Հասաւ Կիսաեզրափակիչ



*Միացեալ Նահանգներու մէջ ընթացող ՔՈՆՔԱՔԱՖԻ (Հիւսիսային եւ կեդրոնական ամերիկաներու ու Քարիպեան կղզիներու ֆետերասիոն) երկիրներու «Ոսկի Գաւաթ» մրցաշարքի կիսաեզրափակիչի չորս խումբերը դարձան Միացեալ Նահանգներու, Մեքսիքայի, Գանատայի եւ մրցաշարքին հիւրաբար մասնակցող Քաթարի հաւաքականները:*

*Քառորդ Եզրափակիչին Ամերիկա 1:0 արդիւնքով պարտութեան մատնեց Ճամայքայի ազգային խումբը:*

*Մեքսիքա 3:0 յաղթեց Հոնտուրասին, Գանատա 2:0 առաւելութեան հասաւ Քոսթա Ռիքայի նկատմամբ, իսկ Քաթար 3:2 արդիւնքով յաղթեց Սալվատորին:*

*Կիսաեզրափակիչին ԱՄՆ կը մրցի Քաթարի դէմ, իսկ Մեքսիքա՝ Գանատայի:*

*Յաղթող խումբերը Կիրակի, Օգոստոս 1-ին Լաս Վեկասի մէջ կը մրցին տիրանալու համար Ոսկի Բաժակին:*

## Թոքիօ-2020. Դալալոյեանը Ռուսաստանի Ընտրանիի Կազմին Մէջ Դարձաւ Ողիմպիական Խաղերու Ախոյեան



*Ռուսաստանի մարմնամարզութեան հաւաքականը, որու կազմին մէջ հանդէս կու գայ հայազգի Արթուր Դալալոյեանը, դարձաւ Ողիմպիական խաղերու ոսկէ մետալակիր:*

*Արմենփրեսի հաղորդումով՝ Թոքիոյի մէջ ընթացող Ողիմպիական խաղերու մարմնամարզութեան տղամարդկանց խմբային պայքարի ընթացքին Ռուսաստանի ընտրանին հաւաքելով 262,500 միաւորով դարձաւ Ողիմպիական խաղերու ոսկէ մետալակիր:*

## Թոքիօ-2020. Բռնցքամարտիկ Յովհաննէս Բաչկովը Յաղթանակով Մեկնարկեց Ողիմպիական Խաղերուն



*Հայաստանի բռնցքամարտի հաւաքականի անդամ, Եւրոպայի ախոյեան Յովհաննէս Բաչկովը յաղթանակով մեկնարկեց 32-րդ ամառային Ողիմպիական խաղերուն:*

*Արմենպրեսի հաղորդումով՝ Ճաբոնի մայրաքաղաք Թոքիոյի մէջ ընթացող Ողիմպիական խաղերու բռնցքամարտի 63 կգ քաշային կարգին Բաչկովը պայքարը սկսաւ Անտիգուա եւ Բարբուդայէն Ռյան Ալստոնի դէմ մենամարտով: Հայ բռնցքամարտիկը յաղթեց 5:0 հաշուով:*

## Թոքիօ-2020. Մարմնամարզիկ Արթուր Դաւթեանը Երկրորդ Տեղով Դուրս Եկաւ Օխ-Ի Եզրափակիչ



*Հայաստանի մարմնամարզութեան հաւաքականի անդամ Արթուր Դաւթեան Ողիմպիական խաղերու հենցատկերու վարժութեան եզրափակիչի տեղը կը գտնուի:*

*Թոքիոյի մէջ ընթացող Խաղերու առանձին վարժութիւններու հենացատկերու մէջ Դաւթեանն ընդհանուր պայքարին հաւաքեց 14,866 միաւոր եւ երկրորդ տեղը դուրս եկաւ եզրափակիչ: Առաջին տեղով եզրափակիչ դուրս եկաւ Քորէան ներկայացնող Ջիհվան Շին, որ նոյնքան միաւոր հաւաքեց, որքան հայ մարմնամարզիկը:*

*Տղամարդկանց հենցատկերի եզրափակիչը կը կայանայ Օգոստոսի 2-ին:*

## Պարսելոնան ու Նեյմարը Հաշտութեան Հասած Են



*Պարսելոնան եւ պրազիլցի յարձակող Նեյմարը հաշտութեան հասած են վճարման տարաձայնութիւններու շուրջ առանց դատարանի:*

*2013-2017 թուականներուն գաթալոնական ակումբին մէջ հանդէս եկած Նեյմարը 2016-ին պայմանագիրը երկարաձգելու համար կը պահան-ջէր 43,6 միլիոն եւրօ: Պարսելոնան վստահ էր, որ Նեյմարը պէտք է ակումբին վերադարձնէ 9 միլիոն եւրօն, որ ան ստացած էր միայն պայմանագիրը կնքելու համար:*

*Դատարանը վճռած էր, որ Նեյմարը Պարսելոնային պէտք է վճարէ 6,7 միլիոն եւրօ: Ֆուտպոլիստը ունէր այդ որոշումը բողոքարկելու իրաւունք: Ֆուտպոլիստն ու ակումբը դատարանէն դուրս հաշտութեան հասած են:*

*Յիշեցնենք, որ 2017Թ. Օգոստոսին Նեյմարը 222 միլիոն եւրոյի դիմաց տեղափոխուեցաւ ֆրանսական ՊՍԺ:*